En tanto, en Garabaj son recibidos con beneplácito los vientos de la nueva mentalidad armenia que ha agrupado a todas las corrientes politicas y culturales externas e internas para crear un movimiento sólido y flexible, compacto y fuerte, del pueblo en su conjunto, en torno de las dos banderas nacionales y actuales y a la fechas históricas y relevantes; hoy por hoy se ha constituido **La República Unificada de Armenia** la cual podría brindarse en homenaje al gran defensor del pueblo armenio, el pensador ruso Andrei Sajarov, recientemente fallecido.

"Conciencia de la Nación Rusa" el buen Sajarov había defendido a los **armenios en el tema de Garabaj expresando en forma directa: se la debe restituir a Armenia; negando el tan afamado problema étnico.**

Lituania expresa en un cartel "saludos al líder de un pais amigo", el cual pudo ser leído por el presidente soviético de visita a los lituanos. Los armenios pueden recordarle a toda la Unión Soviética la parábola del hijo pródigo que luego de grandes sufrimientos, como Artsaj, ha vuelto al seno materno de la república de Armenia.

Los armenios no son anexionistas, son integristas, quieren el bien de Nogorni Garabaj, son los realmente interesados en su bienestar, no como aquellos que hacen volar las cañerías de agua de Stepanakert. No aspiran a la guerra. Esperan ser respetados como ellos mismos respetan a los otros pueblos.

¿No existe minoría asiria en Armenia y no se estudia su idioma tan particular que ha influido al idioma armenio? ¿y los kurdos no viven en paz en Armenia?. Armenia y la diáspora se han comprometido irrenunciablemente a invertir, construir y donar para enriquecer el estado de vida de los armenios y ¿por que no? de la minoria azeri de Arsaj.

Arsaj es como llamamos los armenios a aquella región. Con orden y disciplina, colocando las cosas en su lugar y los nombres correspondientes a las cosas, iniciaremos la gran obra nacional.

Por la fraternidad de los pueblos los cuales en el proximo mañana se basarán en dicha amistad para la concreción de una unión de países **soberanos, al decir de Lituania y parafraseando decires del líder e** ideólogo Vitantas Landsberghis... pero aqui no termina la nota ni el problema. La situación se agravó al paso de los dias y lo que parecio un gesto generoso del pueblo azeri se transformó velozmente en tráfico de armas y amenaza de secesión.

Las radios internacionales nos alertan, la televisión vía satélite filma las escenas, las primeras planas de los diarios de Buenos Aires nos informan...

continuará

Daniel Roberto Kasparian

Սումկայիթ՝ Ազդանշան Փանթուրանական Վտանգին

Գրեց՝ Նորայր Գարատանեան

Բացի, առ ի ձեւակերպութիւն կատարուած հետապնդումներէն, մէկ-երկու յանձաւոր ազերիներու այդպէս կոչեցեալ դատաւարութենէն եւ առնուած ոչ-օրինակելի վճիռէն՝ ուրիշ ոչինչ: Ո՛չ մէկ պատիժի սահմանում՝ 1988-ի «Սումկայիթ»ի կոտորածին ճշմարիտ հարիւրաւոր հեղինակներու նկատմամբ. ըլլա՛ն անոնք տեղական իշխանութեան ղեկավարներէն, եւ կամ՝ մոլեռանդ կրօնական պարագլուխներէն, որոնք «Ճիհատ»ը (սուրբ պատերազմ յանուն իսլամութեան) շփոթելով թալանի, բռնաբարումի ու վայրագ մարդասպանութիւններու հետ՝ գործադրութեան դրին կանխամտածուած ու ծրագրուած ջարդը հարիւրաւոր անմեղ, անզէն ու անպաշտպան ատրպէյճանաբնակ հայերու:

Ընդհակառակը՝ բարբարոս վայրագութիւնները իրենց բոլոր զարհուրելի եւ աներեւակայելիօրէն անմարդկային երեսներով ու ծալքերով՝ պաշտօնական բնութագրութեամբ մը՝ վերածուեցան պարզ, ոչ-ահազանգային -չըսելու համար բնական- արարքներու՝ կատարուած, Արցախեան պահանջատիրական պայքարէն զայրացած, ինքնագլուխ եւ անպատասխանատու խուժանի մը կողմէ:

Ծիծաղելի-ողբերգականը այս հարցին մէջ այն էր՝ որ կեդրոնական իշխանութիւնները խաւարի թանձր վարագոյր մը իջեցնելով, ծածկեցին իրողութիւնը, եւ պահանջեցին պնդելով միջազգային հանրային կարծիքէն, որ հաւատայ թէ զոհերուն հաշիւը չ'անցնիր 32 մեռեալներու թիւը: Ոմանք ըսին, որ 32 թիւը անցնելու պարագային միայն՝ կրնայ ջարդ մը Խ. Միութեան մէջ, ցեղասպանութիւն կոչուիլ:

Եթէ այս իրողութիւն է՝ ապա պէտք է ըստ պատշաճի շնորհաւորել նաեւ Ազերի «եղբայրները», որոնք, հմուտ ջարդարարներ ըլլալու բնածին տաղանդին՝ կ'աւելցնեն նաեւ անհրաժեշտ ու վտանգաւոր թիւը չգերազանցելու յատուկ հաշուեգիտական շնորհքը: Անշուշտ լաւատեղեակ օտար միջազգային լրագրողները եւ մանաւանդ հայութիւնը, որ յակնէ յանւանէ գիտէր նոյնիսկ ինքնութիւնը՝ հարիւրաւոր նահատակներուն, պիտի չհաւատային այսքան անմիտ յայտարարութեան:

Մարդկային պարկեշտութեան, արդարադատութեան ու մարդասիրական սկզբունքներու այս պակասը՝ ամօթի խարան մըն էր՝ դրուած հրապարակայնութեան ու վերակառուցման ախոյեաններու ճակատին, եւ որ հարցականի տակ առաւ ազգամիջեան եղբայրութեան, բարեդրացութեան եւ այլ բարձր իտէալներն ու սկզբունքները, զորս Խ. Միութիւնը իրը ըրած էր, բարձրաձայն քարոզելով զանոնք տասնամեակներէ ի վեր: Քարոզչութիւն, որուն այնքան հաւատացած էին ու կ'ուզեն հաւատալ տակաւին հայերը, որ անձնատուր եղան ֆիզիքական ապահովութեան, հողային անվտանգութեան ու մանաւանդ ազգերու ազատ ինքնորոշման եւ այլ իրաւունքներու գծով անոր շռայլած երաշխիքներուն: Մտահան չընենք նաեւ, որ հայաստան եղաւ 1921-էն ի վեր Խ. Միութեան ամենէ հաւատարիմ ու հարազատ հանրապետութիւններէն մին. ճիշդ այս հանգամանքին համար է՝ որ հայութիւնը իրաւունք ունի այսօր, հարցնելու Քրեմլինին թէ՝ ինչո՞ւ հայ զոհը դրին դատապարտեալի աթոռին վրայ, մինչ բարբարոս Ազերի դահիճը, մաքիավէլիք դարձուածքներով, գրեթէ արդարացուցին. քիչ մնաց, որ շքանշան մըն ալ տային անոր՝ որպէս վարձատրութիւն ցուցաբերած «քաջութեան ու հայրենասիրութեան», անմեղ եւ անպաշտպան հայ քաղաքացիներու դէմ:

Հակահայ տեսութիւններով ու կեցուածքով տոգորուած Քրեմլինի ղեկավարներ, որոնք մեծամասնութիւն կը կազմեն, ցայսօր կը շարունակեն անտեսել փանթուրանական իրաւ վտանգը, յաճախ հաճոյակատարութիւն ցուցաբերելով ազերիներու նկատմամբ: Ըստ ոմանց՝ կայ ազերիներու մեղմ ու բարի մեծամասնութիւն մը, եւ փոքրամասնութիւն մը մոլեռանդներու, կամ՝ ազգայնամոլներու: Ի՞նչ խեղկատակութիւն եւ ի՞նչ թեթեւամըտութիւն կայ այս տեսութեան մէջ, որ բոլորովին կ'անգիտանայ թուրքին բուն իսկ էութիւնը:

Ինչպէս յաջորդական արիւնալի դէպքերու ընթացքը ցոյց տուաւ՝ շատ, այնքան, քիչ է, չըսելու համար աննշան, համեմատութեամբ թիւը՝ այն ազերիներուն, որոնք պատսպարեցին հայ ընտանիքներ, որ կարելի չէ զայն իբր օրինակ գործածել մանաւանդ հաստատելու համար թէ անոնց շնորհիւ է, որ չջարդուեցան ու փրկուեցան միւս ատրպէյճանաբնակ հայերը խուճապահար փախուստ տուած կամ տեղւոյն վրայ մնացած:

Սումկայիթի ջարդը անպատիժ մնալուն համար է՝ որ կրկնուեցաւ քանիցս Կիրովապատով, Նախիջեւանով եւ Պաքուի մէկէ աւելի ջարդերով: Միւս կողմէ՝ Հայաստանի շրջափակման անլոյծ մնալը, եւ մանաւանդ 1989 Նոյեմբեր 28-ի անարգ որոշումը, որով Գերագոյն Խորհուրդը կը յուսար հանդարտեցնել ազերիները՝ կամայ-ակամայ քաջալերեց այս վերջիններուն հակահայ մոլուցքն ու բարբարոսութիւնները, որոնք հանդէս կու գան այսօր, աւելի լայն բացուած կարկինի մը շրջագծին մէջ, աւելի ահռելի համեմատութիւններով եւ այս անգամ Խ.Միութեան հարաւային տարածքին գտնուող տարբեր վայրերու մէջ: Պաքուէն՝ Տուշանպէ եւ Տուշանպէյէն՝ Թաշքէնթ, եւ տակաւին... մինչեւ ո՞ւր Աստուած միայն գիտէ:

Շատեր հարց կու տան թէ ովքե՞ր, եւ ինչպէս, հրահրեցին փանթուրանական ազերի վարկածին կիրքը որ վարակեց մինչեւ կեդրոնական Ասիոյ խորերը ապրող թուրքազգի ցեղերը: Ե՞րբ այդ կիրքը բորբոք չէր, նոյնիսկ «Եղբայրութեան» լոզունքի դիմակին տակ:

Քրեմլին Պաքուի ներխուժումէն առդին, 20 Յունուար, 1990, Կարծես տեսած է մօտալուտ վտանգին սպառնալիքը: Այս անգամ թիրախը կամ զոհերը միայն հայեր չեն: Իր հարազատ մորթի՞ն վրայ զգաց ցաւը:

Խ. Միութեան պատմութեան մէջ աննախընթաց են այն խոր ու լուրջ շեղումները՝ Մարքսիզմ-Լենինիզմի ուղղափառ գծէն, որ կը ծրագրուին այսօր: Միայն տասնամեակ մը առաջ որո՞ւ մտքէն կ'անցնէր նոյնիսկ մտածել՝ Համայնավար Կուսակցութեան հեղինակութիւնը խնդրոյ առարկայ դարձնել եւ առաջարկել անոր վերացումը կառավարական մեքենայէն, նաեւ՝ անհատական սեփականութեան պաշտօնական ճանաչումը, դրամատիրական դրութեան յատուկ, ազատ շուկայի, անձնական նախաձեռնութեան ներմուծումը, խօսքի ու կարծիքի ազատութեան իրաւունքներու հաստատումը: Իսկ ամենէ անհաւատալին՝ թոյլատուութիւնը, որ կը շնորհուի փափաք յայտնող հանրապետութիւններուն, Խ. Միութեան կազմէն դուրս ելլելու գծով: Երկա՞ր է ցանկը մէկ օրէն միւսը յայտնուող նորութիւններուն, եւ տակաւին չենք գիտեր՝ ո՞ւր կանգ պիտի առնէ արմատական փոփոխութիւններու անիւը. քանդիչ մեքանիզմ մըն ալ շղթայազերծուած է բարենորոգութիւններու շարժումին զուգահեռ՝ որուն վրայ ըստ երեւոյթի, ո՛չ մէկ ներգործութիւն կրնայ բանեցնել, այժմ, Մոսկուան զայն եթէ ոչ ետ մղելու, գոնէ կասեցնելու տեսակէտէն, եւ որուն արտաքին արտայայտութիւնները ահազանգային համեմատութիւններ ստացած են արդէն: Ամէն օր, ամէն ժամ ուշագրաւ նորութիւն մը կը յայտնուի, որ ի դերեւ կը հանէ կանխօրօք հաշուի առնուած հաւանականութիւններ, կամ՝ ենթադրութիւններ, այլ եւ այլ հարցերու նկատմամբ:

Ըստ երեւոյթի՝ Խ. Միութիւնը տակաւին չէ լքած ոչ Վարսովիոյ ուխտը, ո՛չ ալ իր աւանդական դաշնակիցները պաշտպանելու քաղաքականութիւնը: Բայց իր դիմագրաւած ընկերա-տնտեսական ու ներքին ազգամիջեան հարցերը՝ այնքան շատ են, մեծ ու բազմաթիւ, իսկ դուրսէն՝ Արեւմուտքի ճնշումները այնքան զօրաւոր՝ որ չկրնար երկար տարողութեան վրայ չդիմել մեծ զիջումներու ու չփոխել իր գործելակերպը:

եթէ Մոսկուան չուզէ փոխել իր ներկայ կեցուածքը եւ առաւել յանձնառու եւ հեղինակաւոր ուղեգիծ չորդեգրէ՝ պաշտպանելու համար Խ. Միութեան հաւատարիմ եւ ամենէ վստահելի սիւնը կազմող հանրապետութիւնները՝ ներքին սահմաններուն մէջ իսկ, խլրտող կրօնամոլ եւ ազգայնամոլ ծաւալապաշտութեան ահաւոր վտանգին դէմ, որ կը սպառնայ օր մը փլզումի տանիլ Միութեան, ամբողջ երկրին, կառոյցը:

Իրերայաջորդ դէպքերը կը զարգանան գլխապտոյտ արագութեամբ, աննախատեսելի նորութիւններ առաջացնելով:

Հայաստան կը մնայ, ու պիտի մնայ Խ. Միութեան կազմին մէջ, ուրիշ ընտրանք չ'ունի իր սրբազան հողաշերտի պաշտպանութեան համար, այլ միջոց չկայ անվտանգ գոյապահպանումի: Խ.Միութեան ռազմագիտական շահերը նաեւ կը պահանջեն, որ մեր հայրենիքը ըլլայ հզօր ու բարգաւաճ երկիր մը: Ժամանակն է՝ որ Քրեմլինի պատասխանատուները ցոյց տան թէ՝ հասկցած են այն իրողութիւնը եւ չ'ունկնդրեն, ներքին գործոց նախարար՝ Եուրի Պաքաթինի նման, կասկածելի ձայներ բարձրացնող ղեկաւարներու, որոնք կ'առաջարկեն կեդրոնական իշխանութեան կատարեալ ձեռնպահութիւնը՝ ազգամիջեան զինեալ բախումներու եւ այլ բարբարոսութիւններու նկատմամբ: Հայը պիտի պաշտպանէ իր ժողովուրդն ու հողը, գիւղերն ու քաղաքները. մանաւանդ իր պատիւը՝ թշնամիին դէմ աւելի վճռականութեամբ քան երբեք:

Հայ պահանջատիրութեան պայքարը պիտի շարունակուի անդրդուելի կամքով: Հայը ծունկի չէ եկած նոյնիսկ Կարմիր Սուլթանի, Թալաթներու, Էնվէրներու եւ Աթաթուրքներու եաթաղանին առջեւ: Ան ծռիլ չի գիտեր: «Հայը միայն կը խոնարհի իր հողը ցանելու կամ մօրը ձեռքը համբուրելու համար» ինչպէս կ'ըսէր Արցախցի հայ մը: Այս է այսօրուան կարգախօսը:

Կորպաչով. «Պաքուն Թատր Հանդիսացաւ Վայրագ Բռնկումներու, Առանց Միջամտութեան Բազմահազար Անձերու Արիւնն Է Որ Պիտի Հեղուր»

Խորհրդային Միութեան Համայնավար Կուսակցութեան կեդրոնական Կոմիտէի լիակատար նստաշրջանին ժողովին, որ բացուեցաւ Մոսկուայի մէջ Երկուշաբթի 5 Փետրուարին, Ա. Քարտուղար եւ Նախագահ Միխայիլ Կորպաչով 55 վայրկեան տեւող իր բացման ճառին մէջ խօսեցաւ նաեւ Ատրպէյճանի վերջին դէպքերուն եւ շրջանին մէջ արտակարգ դրութեան հաստատման մասին:

Անդրադառնալով Արցախի հարցին եւ Ատրպէյճանի դէպքերուն, Կորպաչով յայտարարեց

Կորպաչով յայտնեց թէ, թէ Ատրպէյճանի մէջ «պետական հարուածի փորձ մը կը կատարուէր, բիրտ ուժի եւ յարձակապաշտ ազգայնականութեան բռնակալութիւն մը հաստատելու համար», կը շարունակէ. «Մեծածաւալ ողբերգութեան մը առաջքը առնուեցաւ վճռական գործողութեամբ: Բազմահազար մարդոց կեանքը վտանգուած էր: Այս գլխաւոր պատճառով է որ (գի...

(Շար.ը էջ 9)

Սովետաշէնը Կը Վերստանայ Իր Հարազատ Անունը՝ Նուպարաշէն



Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան որոշումով Երեւանի մերձակայքը գտնուող Սովետաշէն աւանը վերակոչուեցաւ իր սկզբնական Նուպարաշէն անունով, ի յարգանս Հ.Բ.Ը.Միութեան ազգայինէն եւ հայրենասիրական գործունէութեան:

Աւանը կառուցանելու ծրագիրը 1930-ի սկիզբը յղացած էր Հ.Բ.Ը. Միութեան նախագահ Պօղոս Նուպար Փաշա: Այն ատեն 80ամեայ նախագահին ջերմ փափաքն էր, որ Հ.Բ.Ը.Միութիւնը աւելի հիմնական ու մնայուն ձեռնարկով մը մասնակցի հայրենիքի վերաշինութեան արշաւին եւ Հայաստանի մէջ կառուցանէ նոր քաղաք մը:

Այդ նպատակին իրագործման համար Պօղոս Նուպար կատարեց, այն ժամանակուայ չափանիշով , 100.000 տոլարի անձնական ճնշայ նուէր մը: Հայաստանի մէջ աւան մը շինելու գաղափարը արժանացաւ ժողովրդային ջերմ ընդունելութեան, եւ ժողովրդային հանգանակութենէն գոյացաւ 330.000 տոլար, որ արտակարգ իրագործում մըն էր, երբ յիշուի որ այդ շրջանին բովանդակ Ամերիկան ենթարկուած էր տնտեսական ահարկու տագնապի: Գոյացած 430.000 տոլարի ընդհանուր գումարը կրկնապատկուեցաւ հայրենի կառավարութեան մասնակցութեամբ, եւ որոշուեցաւ աւանը կոչել **Նուպարաշէն,** իբրեւ գնահատանք նախագահ Պօղոս Նուպարի:

1937-ի Խ. Միութեան մէջ փչող խորշակը պատճառ դարձաւ որ Նուպարաշէնը կոչուի Սովետաշէն, որուն վերատին Նուպարաշէնի անուանուած համար ամիսներ ամբողջ աշխատանք տարաւ Սփիւռքահայութեան Հետ Մշակ. Կապի Կոմիտէն:

տակարգ դրութիւն չհաստատուէր Լեռնային Ղարաբաղ, կարգ մը սահմանային շրջաններու ու ապա Պաքու, ոչ թէ տասնեակներու այլ բազմահազար անձերու ա-րիւնն է որ պիտի հեղուր:

Մեր կուսակցութեան, տեղական իշխանութեան եւ կառավարման մարմիններու, մեր խօսքերուն եւ մտաւորականութեան կողմէ խաղցուած մեծ եւ պատասխանատու դերը այժմ աւելի ակընբախ դարձաւ: Պէտք է յստակ դառնայ, որ բոլոր անոնք որ չեղեցան գլխաւոր դիրքերէն , հետեւեցան հին անգործածական զգացումներու կամ ինկան ազգայնական կիրքերու ազդեցութեան՝ զիրենք պիտի գտնեն քաղաքական կեանքէն դուրս: Մենք գիտենք, թէ որքան փերեսթրոյքայի գործընթացը դժուարութեամբ եւ ցաւագին կը յառաջանայ այդ զոյգ հանրապետութիւններուն մէջ: Ասիկա պատճառներէն մէկն է, թէ ինչու ազգայնական ուժերը յաջողեցան գրաւել ժողովուրդը»:

Կեդրոնական Կոմիտէի ժողովը նախորդող շաբաթը, ամբրիկեան CNN հեռատեսիլի կայանը հաղորդեց որ Կորպաչով հրաժարած է իր կուսակցապետի պաշտօնէն: Այսմաեը բաւարար եղաւ որ ամերիկեան սակարանը մի քանի ժամ անկայուն դառնայ, միջազգային վարչապետարանները սրդողանի մատնուին: Վերջին տարիներուն Կորպաչով է, որ կ'որոշէ եւ կը հաւասարակշռէ միջազգային քաղաքական կեանքի կշռոյքը:

Բացման իր կարեւոր ճառին մէջ Ա. Քարտուղարը յայտարարեց որ Խ. Միութեան մէջ Համայնավար Կուսակցութիւնը իշխանութեան մենաշնորհը պէտք չէ պահէ.«*Համայնավարութիւնը պէտք է մրցակցի այլ կազմակերպութիւններու հետ: Ան իր յառաջապահ դերը կրնայ կատարել միայն որպէս ռամկավարաբար ծանօթ ուժ*»: Ու հետեւաբար Համայնավարութիւնը «*պէտք է հրաժարի իր ամէն օրինական կամ քաղաքական առաւելութիւններէն: Ան իր ծրագիրը պէտք է ներկայացնէ, զայն պաշտպանէ ու առաջարկէ աշխատիլ ուրիշ ընկերային եւ քաղաքական ուժերու հետ*»:

Կորպաչով նաեւ դատապարտեց վարդապետականութիւնը եւ կաղապարեալ մտածողութիւնը , որոնք «*կը մեկուսացնեն ընկերվարական պետութիւնները աշխարհի քաղաքակրթութեան հասարակաց հոսանքէն*»:

Կորպաչով...

(Շար. 8-րդ Էջէն)

տորական միջամտութեան) որոշումը առնուեցաւ: Գլխաւոր իրողութիւնը այն է, որ ազգայնական հակախորհրդային խումբեր բացէն ի բաց ոտնձգութիւն կատարեցին սահմանադրական դրութեան, աշխատեցան իշխանութիւնը գրաւել եւ ուզեցին բռնատիրութիւն մը հաստատել, ոչ թէ ռամկավարութիւն՝ այլ միայն ուժ եւ ամբողջական զինուորեալ ազգայնականութիւն:

Փորձուածը, իրողութեան մէջ, միայն պետական հարուած մըն էր, ոչ աւելի, ոչ պակաս:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք բոլոր հայերուն, ատրպէյճանցիներուն եւ ռուսերուն, ուրիշ ազգութեանց պատկանող անձերու, որոնք կորսընցուցին իրենց սիրելիները կամ իրենք տանջուեցան այդ ողբերգական օրերուն: Կուսակցութիւնը եւ Խորհրդային կառավարութիւնը իրենց ամէն կարելին պիտի ընեն, թեթեւցնելու համար գաղթականներուն դժուարին կացութիւնը եւ անոնց օգնելու որ վերադառնան բնականոն կեանքի»:

«*Կեդրոնին սկզբնական դիրքը այն էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պէտք է կարգադրուի այնպիսի ձեւով, որ ոչ յաղթող եւ ոչ պարտուող ըլլայ, այլապէս բռնութեանց եւ թշնամանքի նոր բորբոքումներ, նոր զոհեր եւ կորուստներ անխուսափելի պիտի ըլլան:*

Շարունակեցինք նոյն դիրքը ունենալ նաեւ վէճին գագաթնակէտին ատեն, ու սակայն դարձեալ հաստատեցինք կացութեան վատթարացումը:

Անցեալ տարուան վերջին շրջանին, դժուարին դրութեան մը ատեն, զոյգ հանրապետութիւններու Գերագոյն Մարմինները որոշումներ առին, որոնք առաւել եւս ծանրացուցին կացութիւնը: Հանրապետութիւնները գտնուեցան պատերազմի եզրին:

Երկու կողմերու զինեալ խումբեր բախումներ կ'ունենային. անոնք սկսան զէնքեր գրաւել եւ զօրքերու եւ իրաւապահ մարմիններու վրայ յարձակիլ եւ սեղմեցին ճամբաներու եւ երկաթուղիներու շրջափակումը:

Պաքուն թատր հանդիսացաւ վայրագ բռկրումներու: Եթէ արդէն ամբողջ աշխարհ կը հետեւէր Լեռնային Ղարաբաղի ինքնավարութեան վերականգնման պայքարին, Պաքուի ջարդերը ցնցեցին ամբողջ աշխարհը: Ամբողջ աշխարհ կը տեսնէր թէ ինչպէս ամբոխը կը սպանէր անզէն հայերը, կ'այրէր հայկական թաղամասերը, կ'ոչնչացնէր հայկական ամբողջ ունեցուածքը:

*

Մայր Սփիւռք - Լիբանան

Ոգեկոչում՝ Ընկ. Գերասիմ Ահարոնեանի



Պէյրութի ԻՒՆԿ Արմենակ Եկարեան Ակումբին Նոյեմբեր 24-ի Ընդհանուր Անդամական Ժողովը, ընթացիկ հարցերու քննարկումէն ետք, նուիրուած էր վաստակաշատ կուսակցական ղեկավար՝ ընկ. Գերասիմ Ահարոնեանի ոգեկոչումին: Ներկայ էին քոյր ակումբներու, Շրջջանային Վարչութեան եւ «Զարթօնք»-ի ներկայացուցիչները:

Գլխաւոր զեկուցաբերն էր ողբ. Գ. Ահարոնեանի գործակիցներէն, դաստիարակ՝ ընկ. Յովհաննէս Թաւպաքեան, որ պատկերալից ոճով ու մանրապատումներով ճոխացած , ներկայացուց պատանի Գերասիմը որպէս արթուն ուսանող, ապա՝ առողջ սերունդներ հասցնող անձնըւէր հայ դաստիարակ, լուսամիտ խմբագիր ու կորովի ազգային ղեկավար: Իր մղումովն էր, որ ազգային-եկեղեցական ամենատագնապալի օրերուն, կեանքի կոչուած էր Ա. Եկարեան Ակումբը, որուն քաջարի տղաքը միշտ ներշնչուած մնացին ընկ. Գերասիմի ողջախոհ եւ ողջամիտ ոգիով: Ընկ. Թապաքեան առանձին կարեւորութեամբ անդրադարձաւ Հայ Դատի գծով ընկ. Գերասիմին մատուցած անգնահատելի ծառայութիւններուն եւ այդ ուղղութեամբ յիշեց իր հրատարակած մեծարժէք հատորներն ու յօդուածաշարքերը:

Այս զեկոյցը առիթը ստեղծած էր երիտասարդ ընկերներու՝ ճանչնալու եւ ոգեշնչուելու Գերասիմ Ահարոնեանի պայծառ օրինակով, իսկ երէց կուսակցականներու ալ՝ վերապրելու մեր անփոխարինելի ղեկավար ընկերոջ քաղցր յիշատակը:

«ԶԱՐԹՕՆՔ»

Հանգիստ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արքեպ. Տէրտէրեանի



Հինգշաբթի, Փետրուար 1, 1990, երեկոյեան, վախճանեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արքեպս.Տէրտէրեան:Հանգուցեալը 80 տարեկան էր:

Հինգշաբթի, Փետրուար 1-ի երեկոյեան, ընթրիքէն ետք անհանգիստ զգալով՝ Եղիշէ Պատրիարք հիւանդանոց փոխադրուած ու վախճանած է:

Համաձայն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կանոնադրութեան, Պատրիարքութեան գործերը այժմ ժամանակաւոր կերպով կը վարէ Կիւրեղ Արքեպս. Գաբիկեան, ներկայ Պատրիարքական Փոխանորդը:

Հանգուցեալը ծնած էր 1910-ին, Վան քաղաքի մօտակայ Կայնիմիրան գիւղը, եւ զաւակն էր գիւղապետ Դաւիթի: Մեծ Եղեռնին կորսնցուցած էր ծնողքը եւ հազարաւոր որբերու հետ հասած Պաքուպալի Իրաք վրաքաղաքը, ուրկէ փոխադրուած Պաղեստինի Նազարէթ քաղաքը, ապա՝ Երուսաղէմ՝ Արարատեան Որբանոց:

Իբրեւ ուշիմ աշակերտ ընդունուած էր Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան, որուն ընթացքը աւարտած էր 1932-ին եւ աբեղայ ձեռնադրուած Թորգոմ Պատրիարք Գուշակեանէն:

Տարիներով վարած էր Պատրիարքութեան պաշտօնաթերթը «Սիոն» ամսագրի խմբագրութիւնը, Ժառանգաւորած Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութիւնը: 1948ին ընտրուած էր Լուսարարապետ, եւ 1950-ին, Կիւրեղ Պատրիարքի Վախճանումէն ետք՝ եղած էր Պատրիարքութեան Տեղապահ:

Յաջորդ տարի Ս.Էջմիածնի մէջ ստացած էր եպիսկոպոսական օծում Գէորգ Զ. Կաթողիկոսէն, օծակից ունենալով Մայր Աթոռի ներկայ գահակալը՝ Վազգէն Ա. Կաթողիկոս:

1955-60 շրջանի պատրիարքական յաջորդութեան սուր պայքարներէն ետք, որոնք ցնցած էին թէ Պատրիարքութիւնը, թէ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ թէ հայ գաղութը,Եղիշէ Արքեպիսկոպոս պատրիարք ընտրուած էր եւ այս ընտրութիւնը վաւերացուած Յորդանանի Հիւսէյն Թագաւորէն, ըստ աւանդութեան:

Հանգուցեալ Պատրիարքը նաեւ ճանչցուած էր որպէս բանաստեղծ եւ արձակագիր, եւ իր հեղինակութիւններուն կարգին են, «Սիոն»-ի մէջ գրած անհամար խմբագրականներէն եւ յօդուածներէն զատ, հետեւեալ հատորները. «Նարեկը Հայ Գրականութեան Մէջ», «Մագթաղիեն Մեղրամոմէ», «Հեթանոսաց Առաքեալը», «Կարմիր Ձօրաւարը», «Ընտիր Էջեր», «Լուսամատեան», «Վերան Վրայէն Երանիներ», «Խորհրդակման Գիշերներ», «Անցորդը», «Անկեղդամա», եւայլն:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի Փետրուար 11-ին, եւ Վեհափառ Հայրը պիտի ներկայացնէ Ներսէս Արք. Պզոյպալեան:

Արժանթին-Անգլիա Դիւանագիտական Յարաբերութիւններու Վերահաստատումը

Մինչ արեւելք-արեւմուտք աշխոյժ բանակցութիւններ կը մղեն աշխարհի խաղաղութեան, պատերազմական զէնքերու նուազումի, երկու Գերմանիաներու միութեան, ազդեցութեան նոր գօտիներու ստեղծման թեմաներուն շուրջ՝

Մինչ արեւելեան եւրոպայի վարսովիոյ ուխտի երկիրները դէպի արեւմուտք 180°ի վրայ թեքում մը կ'արձանագրեն՝

Մինչ Անթիափարթրէյտ շարժումի ղեկավար Նելսըն Մանտելա կ'ազատագրուի եւ կը սկսի խաղաղական նոր ասպարէզ մը՝ յետ 27 տարիներու բանտարկութեան, Վիքթըր Վէրսթըր բանտին մէջ՝ դատապարտուած կառավարութիւնը տապալելու յանձաձոխ՝

Արժանթին կ'արձանագրէ պատմական ուշագրաւ եւ կարեւոր իրադարձութիւն մը, իր տնտեսա-ընկերային տագնապին մեծ մտահոգիչ մէկ հանգրուանին:

Ութը տարիներ յետոյ, Մալվինասի (Ֆէօքլէնտ) կղզիներու պատերազմէն՝ 15 Փետրուար 1990-ին, Սպանիոյ մայրաքաղաք Մատրիտի մէջ համաձայնութիւն մը գոյացաւ Արժանթինի եւ Անգլիոյ միջեւ վօրահաստատելու համար 1982-էն ի վեր երկու երկիրներու միջեւ խզուած դիւանագիտական կապերը:

Սկսեալ յառաջիկայ 31-էն՝ պիտի նուազի Անգլիոյ կողմէ յիշեալ արժանթինեան կղզիներուն շուրջ հաստատուած ապահովութեան գօտիի տրամագիծը 70 մայլէն՝ 50 մայլի՝ նաւերուն համար:

Ըստ այս համաձայնութեան, Անգլիոյ եւ Արժանթինի բաղաքացիները կրնան ճամբորդել մէկ երկրէն միւսը առանց վիզայի:

Տեղեկագիր Հայաստանի Մասին, Յունուար 6-25

Գրեց՝ Լուիզ Մանուկեան-Սիմոն

Քաղական Տեսութիւն

Ատրպէյճանի կառավարութեան եւ Ժողովրդային Ճակատին գործադրած վայրագութիւնները կը սպառնան մեր ժողովուրդին եւ հայրենիքին գոյութեան: Խորհրդային կառավարութիւնը որդեգրած է չէզոք կեցուածք մը, ստեղծելով այն պատկերը՝ թէ երկու ազգութիւններու կռիւ է կատարուողը, անտեսելով հայկական մարդկային իրաւունքներու հիմնահարցն ու Ղարաբաղի հայոց շարունակող պայքարը յանուն իրենց հողին ազատագրութեան:

Տրուած ըլլալով որ այս հարցերը անտեսուած կամ թիւրըմբռնուած են, որեւէ լուծումի յոյս աղօտ է: Սումկայիթի ջարդերը, Պաքուի վանտալութիւնները, բռնաբարութիւններն ու սպանութիւնները, ինչպէս նաեւ Գետաշէն, Շահումեան ու Ազատ շրջաններու հայկական գիւղերուն վրայ կատարուող յարձակումները աներկբայ կը դարձնեն թէ ատրպէյճանցիք նպատակադրած են հայերու բնաջնջումը, բայց եւ այնպէս ոչ մէկ դատապարտումի խօսք ըրած է Խորհրդային կառավարութիւնը, ո՛չ իսկ ճանչցած է թէ ատրպէյճանցիք յարձակողաբար մտած են հայերու բնակարաններ եւ գիւղեր՝ վնաս հասցնելու միտումով:

Խորհրդային կառավարութեան մամլոյ պաշտօնական հաղորդագրութիւնները, պատկերասփռումներն ու լրատուութիւնները կը շարունակեն խեղաթիւրել եւ շրջանցել իսկական իրողութիւնները: Խորհրդային կառավարութեան հակազդեցութիւնը կենաց սպառնացող կացութիւններու՝ հայերուն մնայուն ապահովութիւն մը չի ներշնչեր պաշտպանութեան կամ հարցերու կարգաւորման մասին:

Հետեւեալ հարցերը ունին գլխաւոր նշանակութիւն.

1.- Ատրպէյճանի եւ Նախիջեւանի անջատողական պահանջները Հայաստանն ու Ղարաբաղը պիտի թողուն ամբողջովին անպաշտպան: Ցայսօր, կեանքի սպառնացող իրաքանչիւր դէպքի նկատմամբ Խորհրդային կառավարութեան հակազդեցութիւնը ուշացած է առնուազն 4-7 օր, պատճառ դառնալով անհամար մահերու:

2.- Բանակը ներկայիս իր ամբողջական հակակշռին տակ առած է Ղարաբաղը: Կառավարիչ Յանձնախումբի նախագահ Վոլսքին հեռացած է: Մոսկուայէն երկու ներկայացուցիչներ, ներառեալ Քաղկոմի փոխ քարտուղար Փոլինիչքովը, եւ երկու ատրպէյճանցիներ Յունուար 22-ի շաբաթը ժամանեցին Ղարաբաղ՝ բանակցութեանց ձեռնարկելու: Ղարաբաղցիները մերժեցին հանդիպում ունենալ ատրպէյճանցի ներկայացուցիչներուն հետ: Ատրպէյճանական դրօշը բարձրացուած էր կառավարական շէնքին վրայ: Այս արարքը կը նկատուի գրգռութիւն մը՝ ղարաբաղցիները ոտքի առնելու, մանաւանդ որ այդ դրօշը նոյնիսկ Նախիջեւանի մէջ չի գործածուիր: Դէպի Ստեփանակերտ եւ անկէ դուրս բոլոր ճամբաները գոցուած են հայերու առջեւ: Բոլոր տարաբնակներուն կոչ եղած է հեռանալու. Կարգ մը հայ ղեկավարներ ձերբակալուած են կամ հարցաքննութեան տարուած. Բոլորէն պահանջուած է իրենց զէնքերը յանձնել: Հոս եւ շրջակայ գիւղերու մէջ զօրքերը մեր ժողովուրդին ընծայած են որոշ պաշտպանութիւն, բայց ապագան անորոշ է:

Դժբախտաբար, բանակը զանազան հանրապետութիւններու կողմէ յաճախ նկատուած է օտար, նուաճող ուժ: Երբեմն ալ, անոր կրաւորականութիւնը, կարգ ու կանոն հաստատելու անկարողութիւնը եւ տեղացի բնակչութեան հանդէպ յարգանքի պակասը յառաջացուցած են անվստահութիւն:

3.- Ատրպէյճանի հայկական գիւղերուն մէջ հաղորդակցութեան միջոցները գրեթէ անգոյ են: Չկան ահազանգային դրութիւններ: Յունուար 20-ին, մէկ շաբաթ տեւողութեամբ, Ստեփանակերտէն բոլոր հեռաձայնային գիծերը կտրուեցան: Յարձակման ենթարկուած գիւղերու մէջ հեռաձայնային հաղորդակցութիւն չկայ: Ստեփանակերտի գլխաւոր ջրատար խողովակը պայթած է. Յունուար 19-էն ի վեր ջուրէ զուրկ են բնակելի շէնքերը: Գիւղերէն շատեր ելեկտրականութիւն չունին: Ատրպէյճանի մէջ պատկերասփիւռ, ձայնասփիւռ եւ մամուլ փակուած են:

4.- Յունուարի սկզբնաւորութեան վերսկսաւ ատրպէյճանական շրջափակումը դէպի Հայաստան կատարուող երկաթուղային առաքումներուն (միայն 15 տոկոսը կու գայ Վրաստանէն): Բանակը հիմնովին անկարող գտնուած է այս արարքը կասեցնելու մէջ: Երկրաշարժի վերաշինութեան նպատակով առաքուած նիւթերը, իրերը, կերակուրները եւ քարիւղը չեն հասնիր: Զանազան հանրապետութիւններէ բազմաթիւ վերակառուցողներ տուն կանչուած են:

Հայաստանի մէջ կազի եւ ելեկտրականութեան պակասի հետեւանքով, բնակարաններն ու գրասենեակները շատ քիչ կամ ոչ մէկ ջեռուցում ունին. վարժարանները փակուած են, պատկերասփռումները այժմ կը սկսին երեկոյեան 7.30-ին բոլոր բնակիչներուն կոչ եղած է կիսով չափ կրճատելու իրենց ելեկտրականութեան գործածութիւնը: Բոլոր փոխադրամիջոցներուն համար վառելանիւթի տագնապ կայ:

5.- Ամենէն աւելի Խորհրդային Միութեան մէջ արագօրէն անկում ապրող պայմաններն են որ քաղաքացիները կը բարոյազրկեն եւ կը թողուն անհանդարտ ու դժգոհ: Կլասնոսթն ու փերեսթրոյքան հանրապետութիւններու մէջ քիչ իրագործուած են: Դիւանակալութիւնը 72 տարիներէ ի վեր կը մնայ նոյնը: Բարեկարգչական ծրագրերուն նոր մղում տալու սահմանուած վերջին փոփոխութիւնները կը մնան անիմաստ, ամենապարզ հիմնական սարքի մը բացակայութիւնը կը կասեցնէ բոլոր ծրագիրները:

6.- Խորհրդարան եւ ազատ ընտրութիւններ հաստատող կորպաչեւեան քայլը դուռ բացած է անվերջանալի բանավէճներու եւ հակադրութիւններու՝ առանց շօշափելի արդիւնքներու տնտեսական եւ ընկերային պայմաններու բարելաւման մէջ: Անթիւ բարեսիրական, ընկերային ու քաղաքական խմբաւորումներու կազմութիւնը պարզապէս առաջնորդած է աւելի անկազմակերպ վիճակի (գրեթէ քաօսի) եւ իշխանութեան մրցակցութեան: Կը մնայ սպասել որ ժամանակն ու փորձառութիւնը բերեն նշանակելի բարեկարգութիւններ:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ-ԴԱՐՄԱՆՈՒՄ

Գոհունակութիւն է տեսնել կատարուող վերաշինական աշխատանքներու յառաջխաղացքը: Եթէ գնահատել ուզեմ թիւը մարդոց, որոնք բնակարան պիտի ունենան վերաշինական այս աշխատանքներուն իբրեւ հետեւանք, պիտի ենթադրեմ առնուազն 250.000 մը: Աւելցուցէք աստ գիւղացիներու անհատական ջանքերը, եւ պիտի ունենանք գլխաւոր քայլառաջ մը երկրաշարժէն անտուն մնացածներու ֆիզիքական վերականգնումին առումով:

Մեծապէս երախտապարտ ենք Խորհրդային կառավարութեան եւ բոլոր հանրապետութիւններուն՝ իրենց օգնութեան եւ վերակառուցման կազմակերպման համար: Եթէ հայերու միջոցներուն ձգուած ըլլար՝ ապագան շատ աղօտ պիտի ըլլար վստահաբար:

Քաղաքային կեդրոններուն վերականգնումը ուրիշ հարց մըն է: Որքա՞ն ժամանակի պիտի կարօտի Լենինականի կեանքին ու նկարագրին Վերականգնումը, կամ բնակչութեան վերադարձը Կիրովականի ու Ստեփանաւանի սիրտը: Երբ դրսեցիները աւարտեն իրենց գործը պիտի մեկնին: Վերակենդանացումի իրագործման պարտականութիւնը պիտի մնայ Հայաստանին: Կրնա՞ն իրագործել ատիկա: Որքա՞ն ժամանակի պիտի կարօտի 30, 50, նոյնիսկ 100 տարիներու հանրային կեանքի մը վերականգնումը:

Տնտեսապէս, Հայաստանը կը դիմակալէ շատ դժուար տարիներ: Տնտեսութեան վերականգնումի ջանքերը ցաւագինօրէն դանդաղ պիտի ըլլան: Երկրաշարժի հետեւանքով իր արտադրութեան 80 առ հարիւրին կորուստը, գործարաններու տրամադրուող խորհրդային յատկացումներու փոփոխութիւնը, հինցած մեքենաներու հետզհետէական քայքայումը, մինչ ուժի պակասը եւ հաշմող վարչաձեւ մը կ'առաջացնեն խիստ բարոյեալքեալ եւ անարտադրողունակ աշխատուժ մը: Աւելի երիտասարդ սերունդ մը քիչ պատեհութիւններ պիտի գտնէ ինք իրեն համար:

Մտաւորապէս, չեմ գիտեր թէ այս սերունդին վերականգնումը հնարաւոր պիտի ըլլա՞յ: Չվնասուած գիւղերու եւ աւաններու մէջ բնակողները կը շարունակեն իրենց կեանքը, բայց աղէտեալ շրջաններու բնակիչները կ'ապրին վախի եւ սուգի մէջ: Բազմաթիւ սիրելիներու կորուստը, Դեկտեմբեր 7-ի յիշատակները, հոգեբուժական եւ առողջապահական ոչ-գոհացուցիչ խնամքը, գործի պակասը, առօրեայ կեանքի դժուարութիւնները, Խորհրդային Միութեան չարագուշակ պայմանները, քաղաքացիական պատերազմն ու Ղարաբաղի համար շարունակուող պայքարը քիչ յոյս կը թողուն բնականոն ապրելակերպի մը համար անոնց, որոնք տառապած են այս ողբերգութենէն:

Նոյնիսկ նոր բնակարաններու հաստատումը, որ ենթադրուած է փոխարինութիւն մը ըլլալ, մնայուն յուշարար մըն է: Ամենաշատ զոհ ունեցողներու կամ վնասուածներու տրուած են առաջին բնակարանները՝ ամբողջական համալիրներ եւ շէնքեր ընդմիշտ վերածելով ողբերգութեան վայրերու:

Լենինական, Յունուար 17

Իրապէս զարմացած եմ այսքան յառաջդիմութիւն տեսնելով: Նոր աւանը, ճիշդ քաղաքին հիւսիս-արեւմուտքը, պիտի դառնայ բնակավայրը 180.000 բնակիչի: Շէնքերը, ոչ բարձր քան չորս յարկ, արդիական են եւ հրապուրիչ: Անոնցմէ քանի մը հատը ունին բնակիչներ, բայց մեծամասնութիւնը պատրաստ պիտի ըլլայ հազիւ 1990-ի աւարտին կամ 1991-ի սկիզբը, եթէ շրջափակումը իրապէս չձգձգէ կառուցումը: Ինծի ըսին թէ պիտի կառուցուին հանրախանութներ, շարժապատկերի սրահներ եւ ընկերային հաւաքատեղիներ. կը մնայ սպասել:

Խորհրդային զանազան հանրապետութիւններ պատասխանատու են այս ամբողջ վերակառուցումին՝ բերած ըլլալով երկրաչափներ, ճարտարագէտներ, բանուորներ եւ ամէն տեսակի շինանիւթեր: Հարիւրաւոր կռունկներ կը տեսնուին:

Մասնագէտներու կը մնայ դատել հողի բնոյթին եւ շէնքերու երկրաշարժի դէմ դիմացկունութեան մասին: Բայց եւ այնպէս, իրողութիւն է թէ առանց Խորհրդային Միութեան օժանդակութեան, անկարելի պիտի ըլլար այսքան կարճ ժամանակի մէջ այսքան բնակարան տրամադրել:

Ներկայիս Լենինական կը բնակի 170.000 մարդ: 20.000 բանուորներ եւ իրենց ընտանիքները դրսեկ են. 60.000 կը բնակին չվնասուած տուներու մէջ, 90.000՝ ժամանակաւոր ապաստարաններու: Ժամանակաւոր բնակարանները լաւ կազմակերպուած են՝ յաճախ 2 կամ 3 տուն իրարու միացած, երբեմն նոյնիսկ երկյարկանի: Հիմա գրեթէ վրաններ չեն տեսնուիր այլեւս: Նախորդ՝ Մարտի այցելութենէս ի վեր քաղաքը բաւական մաքրուած գտայ:

Աւստրիացիներու կառուցուած բնակարանային համալիրը ամբողջութեամբ աւարտած է, բայց տակաւին կը սպասէ ելեկտրական եւ ջրամատակարարային յարմարութիւններուն: Ճամբաներ չկան. փոշին դիզուած է: Չեմ ուզեր մտածել իսկ թէ ինչի՞ պիտի նմանի ցեխը՝ երբ ձիւնահալն սկսի:

Բազմարուեստից Հիմնարկը, ամբողջովին կործանած երկրաշարժէն, դասաւանդութիւններ կ'ունենայ կան, կառուցեալ տնակներու մէջ, ապագայ շէնքին մօտիկ, որ կառուցման մէջ է: Բոլոր ւենց թեքնիք սարքերը փճացած են: Այս հիմնարկը մասնագէտներ կը պատրաստէ մանածագործութեան մէջ, որ Լենինականի գլխաւոր ճարտարարուեստն էր:

Այցելեցինք 150 հոգինոց դպրոց մը, քաղաքին կեդրոնը: Հունգարացիներու կողմէ կառուցուած, դուրսէն գրաւիչ չէր ան, բայց ներսէն հոյակապ էր: Լուսաւոր, օդասուն, ընդարձակ դասարաններ եւ, ամենալաւը, 2 արդիական բաղնիքներ: Հունգարացիները ձգած են ճարտարապետական յատկագծերը յաւելուածական շէնքերու՝ եթէ 2.000.000 տոլար կարելի ըլլայ տեղական միջոցներով գոյացնել:

ՔԱՐԻԹԱՍը Լենինականի հիւանդանոցին աւելցուցած է ախտաճանաչումի թեւ մը (զոր չտեսայ) եւ ծրագրած է կառուցել հիւանդանոց մը: Անգլիացիները դպրոց մը կառուցելու վրայ են:

Սպիտակ եւ շրջակայ գիւղեր, Յունուար 19

Իտալական տուները, Իւզպեքիստանի կողմէ կառուցուած բնակարանային համալիր մը եւ Նորվեկիական հիւանդանոցը առաջին տեսարաններն են որ կը պատահին Սպիտակի մատոյցները հասնող այցելուին: Իտալացիները առաջինն էին որ աւարտեցին կանխակառուցեալ տուները, ներքնամասն ալ ամբողջական:

(Շար. 1)

Արեւելեան Պէյրութի Մէջ 300 Մեռեալ, 1000-է Աւելի Վիրաւոր

Պարբերական, կարճատեւ զինադուլներով, Արեւելեան Պէյրութի արիւնալի բախումները՝ թաղէ թաղ ու տունէ տուն, հրասայլերով, թնդանօթներով, ու բոլոր տեսակի զէնքերով, ընդմէջ Զօր. Միշէլ Աունի բանակային միաւորներուն ու Սամիր Ժաժայի «Լիբանանեան Ուժեր»-ուն, օրէ օր նոր զոհեր ու վիրաւորներ կը խլեն երկու կողմերու կռուողներու շարքերէն, ու մանաւանդ՝ բնակչութենէն, որ շաբաթէ մը ի վեր թակարդուած է բնակարաններու մէջ, առանց ելեկտրականութեան, եւ ուտեստեղէնի լուրջ դժուարութեանց մատնուած:

Զոհերու թիւը մէկ շաբթուան մէջ բարձրացած է 300-ի, իսկ վիրաւորներունը կ'անցնի արդէն 1000ը: Հակառակ անոր որ Արեւմտեան Պէյրութի բանակայինները չեն մասնակցիր բախումներուն, արեւմտեան բաժինն ալ զերծ չէ մնացած զոհերէ, քանի քաղուած լուրերու համաձայն, «ուղղութիւնը շեղած» ռումբեր պատճառած են տասնեակ մը մահեր ու վիրաւորներ, ինչպէս նաեւ՝ նիւթական լուրջ վնասներ: Իսկ պատկերասփիւռի կայաններ ցոյց կու տան աւերակուած տուներ ու ամբողջական թաղամասեր, ու ճամբաներու երկայնքին կ'երեւին ածխացած կամ քանդուած ինքնաշարժներու խլեակներ ու շէնքերու փլատակներ:

Բախումները սատկացած էին Անթիլիասէն անդին, ծովահայեաց Տպպայէի բարձրունքներուն վրայ, ուր բանակը կը գրոհէ Ժաժայի ամրացուած դիրքերուն վրայ: Տեղի ունեցած են գիրկընդխառն սուինամարտեր յառաջացող բանակայիններու եւ զինեալներու միջեւ:

Շուրջ հազար զինուորներու վերջին գրոհով մը, բանակը Փետրուար 5-ին գրաւած է «Լիբանանեան Ուժեր»-ու Տպպայայի բարձրաւանդակի վրայ գտնուող ռազմագիտական ամրոցը: Սամիր Ժաժայի ուժերը առայժմ կը մնան Ժունիի ու Ժըպէյլի իրենց դիրքերուն վրայ:

Վատիկանի նուիրակ Փապլօ Փուէնթէի ու մարոնի պատրիարք Ն. Սֆէյրի զինադուլի կոչերը անհետեւանք մնացած են, եւ հասարակ ժողովուրդն է որ կը տուժէ դարձեալ, զոհ դառնալով անխնայ ռմբակոծումներու:

Ճորճ Սեմերճեան Կը Մահանայ Պէյրութի Մէջ

Փետրուար 2ին, Արեւելեան Պէյրութի մէջ, բանակին ու «Լիբանանեան Ուժեր»ու միջեւ վերսկսած զինեալ արիւնալի բախումներու ընթացքին, երբ Պէյրութի «Էն Նահար» ու բրիտանական Ռէօթըր գործակալութեան համար դէպքերը կը լուսանկարէր, Ճորճ Սեմերճեան գլուխէն ծանրօրէն վիրաւորուելով, երկու օր ետք մահացած է:

Անիկա 1970ական թուականներուն «Էն Նահար» անկախ թերթի պաշտօնական լուսանկարիչը դարձաւ: Ան ամուսնացած էր եւ ունէր երկու դուստրեր -4 եւ 1 տարեկան- եւ հազիւ 40 տարեկան էր: Անիկա ծանօթ էր Ճորճիկ անունով, համեստ էր, անկեղծ, պատրաստակամ, ծառայասէր ու սիրուած լրատուական շրջանակներու մէջ:

Ճորճ Սեմերճեան պիտի յիշուի լիբանանեան երկարատեւ քաղաքացիական պատերազմը նկարող իբրեւ ամէնէն խիզախ լրատու լուսանկարիչը:

(Հ.Բ.Ը.Մ.ի Տեղեկատու Գրասենեակ, Ուաշինկթըն, Տի.Սի.)

«Էմնըսթի Ինթըրնէյշընըլ» Կը Դատապարտէ Պաքուի Բոկրոմը

Մարդկային Իրաւանց Պաշտպան «Միջազգային Ներում» կազմակերպութիւնը, որուն կեդրոնը կը գտնուի Լոնտոն, Անգլիա, յայտարարութեամբ մը իր խռովքը կը յայտնէ Պաքուի հայոց դէմ գործադրուած սպանդին համար, զոր դադրեցնելու ոչ մէկ փորձ կատարած են ատրպէյճանական ոստիկանութիւնը եւ իրապահ ուժերը:

«Էմնըսթի» կը յիշատակէ այն պայմանները եւ միջոցները, որոնցմով տեղի ունեցան ջարդերը. հակահայ թռուցիկներ, հայ բնակարաններու հասցէներ, եւ սպանութեան ձեւեր, աւելցնելով որ Արցախի հարցին 1987-ին ծագումէն ասդին պաշտօնական տուեալներով առնուազն 300 հոգի մեռած են, մինչ շատեր վիրաւորուած կամ երկուստեղ պատանդ առնուած, իսկ անպաշտօն տուեալներով զոհերուն թիւը շատ աւելի են:

«Էմնըսթի Ինթըրնէյշընըլ» կը ճշդէ, թէ ինք որեւէ դիրք չի բռներ Արցախի հարցով, սակայն ինք կը դատապարտէ մարդկային իրաւանց ոտնակոխումը եւ նաեւ՝ ոճրագործութեան անպատիժ մնալը, ազերի իշխանութիւններէն պահանջելով որ անոնք անհրաժեշտ բոլոր քայլերը առնեն կարգը վերահաստատելու եւ ոճրագործները դատավարութեան ենթարկելու:

Կազմակերպութիւնը իր անդամներուն կը յայտարարէ, որ հեռագիրով եւ նամակներով ազերի իշխանութիւններուն յայտնեն իրենց մտահոգութիւնը եւ պահանջեն անմիջական եւ անկողմնակալ քննութիւն մը, ինչպէս նաեւ Մարդկային իրաւանց պաշտպանութիւնը եւ ոճրագործներուն դատապարտութիւնը:

Մոսկուայ Ջնջեց Հայաստան Օգնութիւն Փոխադրող Թռիչքը

Խորհրդային իշխանութիւնները ջնջեցին Հայկական Միացեալ Ֆոնտի (United Armenia Fund) կողմէ Հայաստան օգնութիւն փոխադրող օդանաւին Շաբաթ, 3 Փետրուարի թռիչքը «թէքնիք» պատճառներով: Օդանաւը թռիչք պիտի առնէր Լոս Անճելըսէն եւ պիտի փոխադրէր ամենէն անհրաժեշտ իրեղէններ, դեղօրայք, հագուստ ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու Պաշտպանութեան Նախարարութեան կողմէ նուիրուած փայտով տաքցուելիք օճախներ:

Հայաստանի առողջապահական սպասարկութիւնները ինչպէս նաեւ աւերեալ շրջանի բնակիչները ստիպողական պէտք ունէին առաքուելիք ապրանքներուն: Շաբաթ օրուան թռիչքը օգնութեան չորրորդ առաքումը պիտի ըլլար վերջին շրջանին:

Ամերիկահայ կազմակերպութիւնները խորապէս վրդոված են վերջին պահու այս արգելքին, որ Ամերիկայի կառավարութեան, Խ. Միութեան, Հայաստանի եւ Միացեալ Ֆոնտի միջեւ գոյութիւն ունեցող համաձայնութեան խախտում մըն է: Հայկ. Կազմակերպութիւնները բողոք պիտի ներկայացնեն առ որ անկ է, պահանջելով որ օգնութեան թռիչքները անխափան շարունակուին:

Միացեան Ֆոնտը կազմուած է ամերիկահայ եօթ կազմակերպութիւններէ:

Քիսինճըրի Համաձայն, Հայկական Բանաձեւը Անպէտ Եւ Անժամանակ Է

Նախագահներ Նիքսընի եւ Ֆորտի վարչութեան պետական քարտուղար Հենրի Քիսինճըր, Թուրքիոյ Նախագահ Թուրկուտ Էօզալի հետ Նիւ Եորքի մէջ տեսակցութեան ընթացքին երբ իր կարծիքը ուզուած է Հայկական Բանաձեւին մասին, նախկին Նախարարը ըսած է, թէ այդ բանաձեւը անպէտ ու անժամանակ է, եւ աւելցուցած է. *«Հայ ժողովուրդին տառապանքը կը հասկնամ, բայց միեւնոյն ժամանակ կը զգամ որ պէտք է յարգանք ցուցաբերել Թուրք ժողովուրդին արժանապատուութեան»*:

Նախապէս Քիսինճըր ճշդում մըն ալ ընելու անհրաժեշտութիւնը տեսեր է, թէ Էօզալի հետ տեսակցութեան համար դրամ չէ առած, աւելցնելով. *«Ես օտար ոչ մէկ պետութենէ դրամ կը ստանամ»*...:

Հենրի Քիսինճըր, որ կը ներկայացնէ ամերիկեան պահպանողական աջ թեւը, այն նշանաւոր դէմքերէն է, որ իր ճնշիչ անհատականութեամբ ճշդած եւ վարած էր ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը, ի մասնաւորի Ճերըլտ Ֆորտի նման տկար անձնաւորութեան մը նախագահութեան շրջանին: Ինքն է, որ վառօթի տակառները զետեղած է Միջին Արեւելքի եւ այլ երկրամասերու մէջ: Քիսինճըրը կարելի է նկատել Լիբանանի ներկայ երկարաձգուող տագնապին գլխաւոր դարբինը: Այժմ ունի *լոպիինկի* գրասենեակ մը, որմէ նուազագոյն խորհուրդը ստանալու համար կ'ըսուի թէ պէտք է վճարել 100.000 տոլար...: Այս ալ «արժանապատուութեան հարց է»:

Նախագահ Էօզալ տեսակցութիւն մըն ալ ունեցած է Յունաց Եագովոս Սրբազանին հետ: Այս տեսակցութենէն վերջ Յոյն Առաջնորդը լրագրողներու կողմէ դարձեալ Հայկական Հարցին մասին եղած հարցումին պատասխանած է. *«1915-ին ես չորս տարեկան էի: Ինչեր պատահեցան չեմ գիտեր, բայց եթէ այդպիսի դէպքեր պատահեր են, փոխանակ զանոնք քննադատելով մեկնաբանութիւններ ընելու, անոնցմէ դաս պէտք է քաղել: Պէտք չէ զգացականութեան տարուելով աղմուկ յարուցանել»*:

Ջենք գիտեր թէ ուրիշ ինչ կրնար պատասխանել Յոյն եկեղեցականը երբ Պոլսոյ մէջ այնքան զգայուն դրութեան մը մէջ կը գտնուի յոյն համայնքը:

Տալու Եւ Ստանալու Հարցը Ազգային Գետնի Վրայ

Շատ անգամներ բախտը կ'ունենամ գործակցելու երիտասարդ հայ մասնագէտներու հետ: Նոյնը ինձի համար խոր հաճոյք րն է, ի մասնաւորի երբ ազգային ձեռնարկի մը շուրջ կ'ըլլայ մեր գործը: Գիտակից անձեր որ համալսարանի աւարտած, զանազան ասպարէզներու լծուած, կը խանդավառուին հայկական հարցերով, կ'ուզեն օգտակար ըլլալ...ինչպէ՞ս չուրախանալ:

Սակայն կայ կէտ մը որ լաւ պարզուած չէ եւ որուն մասին անհասկացողութիւններ տեղի կ'ունենան: Այս տողերով ես պիտի համարձակիմ այդ փափուկ խնդրին մօտենալ:

Կան պարագաներ երբ երիտասարդ հայ մասնագէտներ իրենց գրաւած կեանքէն ժամեր խլելով զանազան ձեռնարկներու կը մասնակցին: Ձեռնարկը կը յաջողի կամ կը ձախողի: Կրնայ յաջողիլ ուրիշ հայերու անտարբերութեան, անձնասիրութեան, սնափառութեան, անգիտակցութեան, կամ նիւթական պակասներու հետեւանքով: Մասնագէտը խափանուած կը զգայ, չի հանդուրժեր այդքան ժամեր կորսնցնել ուրիշներու տգետ կամ անբարեացական վարմունքով: Յաջորդ անգամ երբ իրեն կը մօտենան որ ձեռնարկի մը մասնակցի կամ խորհրդակցի, կ'ըսէ. «Եթէ հայերը կուզեն որ իրենց համար աշխատիմ՝ պէտք է որ վճարեն իմ ժամանակիս կամ գիտութեանս արժէքը», եւ թերեւս աւելցնէ. «Հայը երբ հայէ գործ մը կը ստանայ՝ արժէք չի տար, երբ օտարէ մը նոյն բանը առնէ՝ շատ աւելի արժէք կուտայ»: Ցաւալի չէ՞:

Այսպիսի տրամաբանութիւն ի հարկէ արդար կը թուի: Ինչ որ գիս կը տխրեցնէ մասնագէտին դիրքն է: Ինքզինքը կը դնէ մէկ կողմ, հայերը միւս կողմ: Չի զգար թէ բոլորս մէկ հայութիւն կը կազմենք, լայն իմաստով:

Կայ ուրիշ իրողութիւն: Ընդհանրապէս այս դարուս կէսին ծնող հայեր հայութեան հանդէպ պարտական կամ պատասխանատու կը զգան: Եթէ հանգամանկութիւններու մասնակցող կամ ազգային ձեռնարկներու տուող չեն՝ անգիտակցաբար յանձաւոր կը դառնեն ինքզինքնին: Երբ առիթը կ'ունենան բան մը ընելու, ազգին օգտակար ըլլալու, գոհունակութեամբ կը մասնակցին, որովհետեւ կը կռահեն թէ այդ առիթով «ազգային տուրք» մը վճարած կ'ըլլան:

Այդ պարտաւորութեան զգացումը սփիւռքի շատ մը երիտասարդներուն մօտ չկայ: Բայց կայ իրենց ժառանգած հայութիւնը օգտագործելու տրամադրութիւնը: Եթէ նարտարապետ են կ'ուզեն որ հայեր իրենց գործ տան:

Սակայն երբ հայեր իրենց գործ կուտան՝ չեն ուզեր վճարել ինչ որ օտար մը նոյն գործին համար պիտի պահանջեր: Երիտասարդ բժիշկներ կ'ըսեն թէ հայերը իրենց չեն մօտենար մինչեւ որ փորձառութիւն եւ համբաւ շահին, չեն օգներ ճիշտ այն շրջանին երբ օգնութեան պէտք ունին: (Այսպիսի խնդիրներով կրնայ զբաղիլ կեդրոնական մարմնին ենթակայ յանձնախումբ մը՝ կամ համալսարանականներու միութիւնը):

Սակայն եթէ ազգային պատասխանատուութեան զգացումը կը պակսի՝ դժուար է զայն ստեղծել: Ան կը ծնի ընտանիքներու, դպրոցներու, միութիւններու, ակումբներու մէջ ու կը սնանի, կ'անի մեր լեզուն, պատմութիւնը, մշակոյթը ճանչնալով: Բայց աւելի տարեց չափահասները կրնան իրենց օրինակով, բարի գործերով ու կեցուածքով այդ «noblesse oblige»ի տրամադրութիւնը սորվեցնել:

Կան բոլոր սերունդներու մէջ կծծիներ, գձուձներ, ժլատներ, խաբեբայ մտայնութեան տէր անձեր, որոնք ժխտական ազդեցութիւն կը գործեն նոր սերունդներուն վրայ, զանոնք հեռացնելով հայոց մեծ ընտանիքէն: Ժամանակը եկած ու անցած է որ մաքրենք այս փնթի յատկութիւնները մեր մէջէն: Գիտակցութեան դարը կ'ապրինք ուր հոգեբանութեան միջոցները ժողովրդական դարձած են, եւ կը նպաստեն որ ամէն անձ ինքզինքը ճանչնայ եւ բարեփոխէ:

Այս մտածումները կրնանք հետեւեալ կերպով ամփոփել.

Երբ հայ մը ուրիշ հայէ մը կը ստանայ որեւէ գործ, պէտք է իր արժէքը հատուցանէ:

Երբ հայ մը կուտայ իր ժամանակէն եւ գիտութենէն հայութեան, իր ազատ փափաքով ու կամքով, ատիկա գին չունի, ատիկա նուէր մըն է ազգին:

Երբ հայ մասնագէտ մը կ'ուզի որեւէ «փրոֆէսիոնալ» խորհուրդ կամ գործ, արժէքը կ'որոշի եւ ժամանակին կը վճարուի, ինչպէս պիտի վճարուէր օտարի մը:

Նախկին սերունդները կը պարտին փոխանցել նոր սերունդներուն մեր աւանդական արաքինութիւնները, զոր օրինակ առատաձեռնութիւն, ասպնջականութիւն, ազգին օգնելու պատրաստակամութիւն, եւայլն, իբր մարդկային, ազնուական յատկութիւններ, այսինքն ներարկել «noblesse oblige»ի գաղափարը հայութեան հանդէպ:

Ալիս Թարագնեան-Եզեկելեան
Օլիվոս, Յունուար 4, 1990

Առեւտրական Կապեր Հայաստանի Եւ Իրանի Միջեւ

Թեհրանի «*Ալիք*» թերթը, Դեկտեմբեր 28-ի թիւով հետեւեալը կը գրէ.

«Հարեւան երկրների հետ սահմանային առեւտուրի ընդարձակման ծրագրի շարքում, Իրանի առեւտրականներին արտօնուել է Մազանդարան նահանգից առեւտուր ունենալ Խորհրդային Հայաստանի հետ:

Լուրը նահանգի կենտրոն՝ Սարի քաղաքում, հաղորդել է Մազանդարանի առեւտրական հարցերի գծով օգնական Էհսանին եւ յայտնել է թէ՝ սահմանային առեւտրի հիմունքով Մազանդարան նահանգի գործարանների արտադրանքը կ'արտածուի Հայաստան եւ դրա փոխարէն կը ներածուեն Իրանին անհրաժեշտ ապրանքներ:

Սոյն փոխանակութիւնը նախատեսուած է կատարել Նոշահր նաւահանգստից: Իրանի կառավարութիւնը վերջերս արտօնութիւն է տուել սահմանային նահանգների բնակիչներին առեւտուր ունենալ հարեւան եւ բարեկամ երկրների հետ: Մազանդարան նահանգը իրաւասու է տարեկան 15 միլիոն տոլարի սահմանում ապրանք փոխանակել Խորհրդային Հայաստանի հետ։

Այս մասին լուր է հաղորդել նաեւ Երեւանի ռատիօն, յայտնելով թէ՝ Հայաստանի Նախարարաց Խորհուրդը որոշում է ընդունել ակտիւացնել սահմանային առեւտուրը՝ Իրանի հետ»:

ՎԵԶԻՐՈՎ ՊԱՇՏՕՆԱՆԿ

«Ղարաբաղի Հարցը Բարձրացնողները Գերեզմանի Մէջ Կը Գտնեն Իրենց Տեղը»

Ատրպէյճանի Ա. Քարտուղար Ապտըլ-Ռահման Վեզիրով պաշտօնանկ եղաւ: Զինք փոխարինեց վարչապետ Այազ Նիալզիօղլու Մութալիպով:

Վեզիրով իշխանութեան եկաւ Սումկայիթի ջարդէն երկու ամիս ետք, փոխարինելով Քիամրամ Պաքիրովը, որ կը նկատուէր Պրեժնեւ-Ալիեւ երկեակին հոգեզաւակը:

Կորպաչով Վեզիրովի յանձնեց Ատրպէյճանը ապասումկայիթացնելու պաշտօնը, այլ խօսքով մօտէն հսկելու որ ազերի «խուլիկաններ»ը կրկին փողոցին տէրը դառնան:

Վեզիրով ինք ստեղծեց պայմանները, որ Սումկայիթը կըրնուի Պաքուի մէջ: Աւելի լաւ ճանչնալու համար այս թիւ 2 Պաքիրովը, եկս կուտանք իր մըտածումները, որ ան որոշ ինքնագոհութեամբ անցեալ շաբաթ արտայայտած է Պաքուի հեռատեսիլէն:

Ա. քարտուղարը զուգահեռ մը քաշելով Անտրէ Սախարովի եւ Արցախի հայկականութիւնը պաշտպանող անձերու միջեւ ըսած է. «Ձեզի յայտնի է, այսպէս կոչուած, ակադեմիկոս Սախարովի անունը: Անցեալ տարի ես հանդիպեցի անոր հետ: Սախարով կը պահանջէր Լեռնային Ղարաբաղը Հայաստանին տալ, իսկ ես գիտէ՞ք ինչ պատասխանեցի. պատասխանեցի ՝ "խնդրեմ, շալկիր տար": Հիմա տարաւ, հա»:

Արիւն հոտող այս խօսքերուն ի լուր, շուրջիններուն արձակած հոհոացէն աւելի ոգեւորուած,

Թալաաթներու, Էնվէրներու եւ սուլթանովներու այս արժանաւոր յաջորդը աւելցուցած է. «Այո, այդ հարցը բարձրացողները այնտեղ կը գտնեն իրենց տեղը: Մեր թշնամին դուրս պէտք է ընենք մեր ճանապարհէն, ինչպէս որ մէկդի ըրինք կուսակցութեան Ղարաբաղի Մարզկոմը, Յատուկ Կառավարման Կոմիտէն եւ շատ շատերը: Մեր ճանապարհը ոչ ոք չի կրնար փակել: Լա՛ւ իմացէք, կեդրոնը մեր ձեռքն է»:

«Արմէնփրէս» կը հաղորդէ, որ հեռատեսիլի իր ելոյթին ընկիզբը, Վեզիրով գործնական ցուցմունքներ տուած է, Արցախի հարցը թաղելու ձեւերու մասին, եւ այդ առթիւ կոչ ըրած է ազերի հայրենակիցներուն՝ միաբանիլ եւ պատժել Արցախի ժողովուրդը:

Ատոր համար, ազերիները պէտք է միայնին եւ «բռունցք» դառնային, քանի որ իրարանցատ մատերը կրնան ջարդուիլ: Խօսքը պատկերազարդելով, ինթերնացիոնալիզմի որպէս տիպար ներկայացուած այս նորակերպ հրէշը, մերթ մատը թափ տուած է, եւ մերթ բռունցքը ցոյց տուած է:

Մատնանիշ ըրած է նաեւ որ բոլոր չարիքներուն կեդրոնը Արցախն է եւ անոր կեդրոնը՝ Ստեփանակերտը, եւ հետեւաբար պէտք է այդ չարիքի որջը հիմնայատակ ոչնչացնել...

ԳԱՆԱՏԱ - Մոնթրէալ

Ճգնաժամ

Մեծ Ոճիրէն 75 տարի ետք, հայ ժողովուրդը իր հայրենի հողին մէկ մասին վրայ, դարձեալ կը գտնուի անէացման եզրին:

Թշնամին, իր ազգայնամոլ ու հայատեաց քաղաքականութեամբ ու հետեւականօրէն ձգտելով փանթուրանական երազի իրականացման, այսօր դարձեալ գլուխ ցցած է, հաշուեյարդարի ենթարկելու համար Արցախի հայութիւնը, հայաթափ այդ շրջանը ամայացնելով իր բնիկ տարրէն, այնպէս ինչպէս ըրաւ Նախիջեւանի պարագային:

Այսօրուան մեր զգացած ցաւը մեզ կը տանի ետ աւելի քան վեց տասնամեակ, երբ բռնատէր Ստալինը քաղաքական անբարոյ հաշիւներով գրչի մէկ հարուածով Նախիջեւանը եւ Արցախը նուիրեց մեծ դահիճին ցեղակից՝ նոյնքան արիւնարբու ոճրագործ ատրպէյճանցիին: Մեր ցաւը առաւելագոյն չափով կը սաստկանայ, երբ կը տեսնենք որ յանուն միջազգայնութեան, եղբայրութեան եւ այլ փցուն ու խաբկանքի համազօր կարգախօսներու, խորհրդային իշխանութիւնները գիտակցօրէն աչք գոցեցին տասնամեակներ շարունակ բացէ ի բաց գործադրուող հարստահարութեանց դէմ: Ազգերու եւ ժողովուրդներու միջեւ հաւասարութեան այդ քաղաքական քարոզները որպէս քնաբեր դեղահատ գործածուեցան, մինչ անդին Ատրպէյճանի կողմէ գործադրուեցաւ բնաջնջումի քաղաքականութիւն մը, Նախիջեւանի եւ Արցախի հայութեան հանդէպ, այլատեսութեան բուռն զգացումներով. ու պատահեցաւ ողբերգութիւնը. Նախիջեւանի անպաշտպան եւ յուսալքուած հայութիւնը լքեց իր հազարամեակներու հողը եւ վերջնականապէս հեռացաւ Նախիջեւանէն:

Նոյն այս քաղաքականութիւնը սկսած էր գործադրուիլ նաեւ Արցախի պարագային, աւելի քան չորս տասնամեակ առաջ. սակայն, տեղւոյն հայութիւնը, կուրծք տալով ամէն տեսակի նենգ դաւերուն եւ հարստահարութիւններուն, կառչած մնաց իր հողին, պահելով իր գերակշիռ թիւը՝ ամբողջ բնակչութեան 80 տոկոսը: Կատղած ազերին, ի տես իր ցարդ գործադրած քաղաքականութեան ձախողման, այսօր կը դիմէ բիրտ ուժի, ամենէն անմարդկային ձեւերու, որպէսզի ահաբեկէ տեղւոյն հայութիւնը: Ատրպէյճանի ցեղապաշտ ղեկավարներն ու նոյնքան ծայրայեղ ժողովրդային առաջնորդները, համադրուած ճիգերով կ'ուզեն լուծել Արցախի հարցը, թրքավարի ձեւով ու վերջնականապէս: Մեր ցաւը այս հանգրուանին կը պոռթկայ երբ կ'անդրադառնանք որ՝ խորհրդային իշխանութիւնները անցնող տասնամեակներուն ազատ ասպարէզ շնորհելէ ետք ազերիներուն, այսօր կը դառնան բոլորովին անզօր թրքազգի խուժանին դիմաց. զարմանալիօրէն չեն ուզեր զէնքի ուժի դիմել գայլի գութին յանձնուած Արցախահայութիւնը պաշտպանելու, մինչ միեւնոյն ատեն անոնք պատրաստ են -քանիցս ալ փաստօրէն ցոյց տուած են- հայ բնակչութեան ինքնապաշտպանական արարքներու եւ բողոքի արտայայտութիւններուն դիմադարձելու բիրտ ուժով, զոհեր ու վիրաւորներ պատճառելով:

Սակայն, առայժմ զանց առնենք անբաղձալի կացութեան քննարկումը, անոր տուն տուող պատճառները, երէկուան եւ այսօրուան յանցաւորները: Կարեւորը, այս հանգրուանին, մեր կարելի բոլոր միջոցներով, առանց յապաղումի, միաժամանակ կան անջատաբար տարուող՝ սակայն, զուգահեռ ընթացող ու նոյն նպատակին ծառայող ձեւերով՝ պէտք է օգնութիւն հասցնենք Արցախ եւ Հայաստան: Օգնութեան ձեւերուն մասին պիտի շարժինք համաձայն Արցախի եւ Հայաստանի հայութեան ներկայացուցած պահանջներուն. սակայն, նոյնինքն օգնութեան կազմակերպումը մենք ենք որ պիտի կատարենք, եւ անյապաղ: Արդէն ստեղծուած է գործօն մարմին մը, բաղկացած մոնթրէալահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, որ Գանատայի Հայոց Առաջնորդութեան հովանիին տակ աշխատանքի ձեռնարկած է եւ արդէն ի գործ դրած է կարգ մը քայլեր: Այս գործունէութեան մէջ կեդրոնական դեր կը խաղայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Հայ Իրաւանց Յանձնախումբը:

Թեմիս Առաջնորդ Վազգէն Սրբազան, Թեմական Խորհուրդի ատենապետ՝ դոկտ. Արշաւիր Կէօնճեան եւ Առաջնորդարանի վարիչ քարտուղար՝ պրն. Հայկ Նագգաշեան, Երեքշաբթի Յունուար 16-ին, յանուն հայ գաղութին, Օթթաուայի մէջ, մէկուկէս ժամնոց տեսակցութիւն մը ունեցան խորհրդային Դեսպան Ա. Մաքարովի հետ: Հեռագիրներ ղրկուեցան Գանատայի Արտաքին Գործոց նախարար՝ Ճօ Գլարքին, Խորհրդային Միութեան նախագահ՝ Միխայիլ Կորպաչովի, Գանատայի Խորհրդարանի երեսփոխաններ՝ տկն. Շըրլի Մահէօի, Նիքոլ Ռոա Ասըլէնի, պրնք. Ճէրի Ուինըրի, Մարսէլ Փրիտոմի եւ Պիլ Աթուէլի: Իսկ Կիրակի Յունուար 21-ին, հոծ թիւով ազգայիններու մասնակցութեամբ, ժողովրդային հաւաք մը կայացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի եւ հոգեհանգստեան արարողութեան, ուր պարզուեցան վերջին դէպքերու մանրամասնութիւնները, ցարդ կատարուած աշխատանքը, եւ ժողովրդային մասնակցութեան անհրաժեշտութիւնը հայրենիքի օգնութեան ի նպաստ:

Իրաւ հայու գիտակցութեամբ, աննահանջ ոգիով, անսակարկ պատրաստակամութեամբ, տանք մեր լուման, Արցախի մեր ժողովուրդին փրկութեան համար:

Ֆրանսայի ՌԱԿի Շրջանը Կոչ Կ'ընէ Միացեալ Ճակատով Օգնելու Հայաստանի Եւ Արցախի

Հայրենիքը եւ հայ ժողովուրդը կ'ապրին ճակատագրական պահեր: Ազերի Թուրքը իր առհաւական նկարագրով դարձեալ ոտքի ելած է նոր ցեղասպանութիւններ գործադրելու մեր ժողովուրդին վրայ, զինու ուժով ու տնտեսական շրջափակումով: Սովետական իշխանութիւնները, Սումկայիթէն սկսեալ իրենց երկդիմի դիրքորոշումով, քաջալերեցին ազերի վոհմակները յարձակելու կղզիացած հայ բնակչութեանց ու գիւղերուն վրայ:

Խորհրդային իշխանութեանց պարտականութիւնն էր պաշտպանել իր քաղաքացիները բոլոր վտանգներու դէմ, եւ ի մասնաւորի կանխամտածուած ու պատրաստուած ցեղային բնաջնջումներու դէմ:

Դժբախտաբար, այդ չուզեց ընել կեդրոնական իշխանութիւնը՝ չենք գիտեր ինչ յետին նպատակներով:

Անգամ մը եւս մեր ժողովուրդը, սփիւռքի թէ հայրենիքի մէջ, կը պահանջէ խորհրդային ղեկավարութենէն իր պարտականութեան վրայ գտնուիլ եւ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել արդարութիւնն ու խաղաղութիւնը հաստատելու համար վտանգուած շրջաններուն մէջ:

Այս պատմական ու ճակատագրական օրերուն, ինչպէս հայրենիքի մէջ պետութիւն ու ժողովուրդ միացած կը դիմագրաւեն անհաւոր վտանգը, այդպէս ալ անհրաժեշտ է, որ սփիւռքը իր բոլոր քաղաքական կազմակերպութիւններով, իր միութիւններով ու ժողովրդային բոլոր ճակատներով միացած՝ կարելի բոլոր միջոցները ձեռք առնէ, նախ օգնելու հայրենիքի ու Ղարաբաղի մեր ժողովուրդին, գոհացնելու այս օրերու անհրաժեշտ իր պահանջքները, ու նաեւ բարեկամ պետութիւններու միջոցաւ ազդեցութիւն բանեցնէ խորհրդային իշխանութեանց վրայ՝ արգիլելու համար նոր ցեղասպանութիւն մը:

Վստահ ենք որ անգամ մը եւս մեր ժողովուրդը, իր առողջ ողջախոհութեամբ եւ իր ամուր դիմադրականութեամբ, պիտի յաջողի շրջանցել սպառնացող վտանգը եւ ապահովել իր յաւիտենական գոյութիւնը, մեզմէ իւրաքանչիւրիս անհրաժեշտ զոհաբերութեամբ:

Ռ.Ա.Կուսակցութեան
Ֆրանսայի ու Պելճիքայի
Շրջանային Վարչութիւն

Մէսուտ Եըլմազ Փան-Թրքութեան Եւ Հայկական Բանաձեւին Մասին

Երէկ գիշեր Մեհմէտ Ալի Պիրանտի «Երեսուներկրորդ Օր» յայտագրին հիւր էր Արտաքին Գործոց նախարար Մէսուտ Եըլմազ, որուն հետ հարցազրոյց մը կը կատարուէր աշխարհի զանազան հարցերուն շուրջ: Հարցազրոյցի ընթացքին Պիրանտ հարցուց թէ կարելի՞ է պնդել թէ Թուրքիա կապեր հաստատել կը ջանայ Խորհրդային Միութեան մէջ ապրող թրքախօս ազգերու հետ: Կարելի՞ է տրամաբանական գտնել փան-թրքական շարժում մը:

Մէսուտ Եըլմազ այս հարցումին տուաւ հետեւեալ պատասխանը. «Ճիշդ է, որ Թուրքիա տաքուկ կը նայի բոլոր այն ազգերուն, որոնք թրքախօս են: Ասիկա շատ բնական է: Բայց ատիկա պէտք է կատարուի այնպիսի կերպով մը, որ հաշտ ըլլայ թուրք-սովետ յարաբերութիւններու ոգիին հետ, յարաբերութիւններ, որոնք զարգացումի մէջ են: Ատիկա պէտք է ըլլայ ուրեմն կերպով մը այդ ազգերուն մշակութային կեանքին նպաստելով, եւ այդքան: Անկէ դուրս բնականաբար կարելի չէ խօսիլ փան-թրքութեան մը մասին, որ տրամաբանական չէ եւ ազգայնամոլութեան նշանակութիւնը կրնայ ունենալ»:

Հայկական Բանաձեւի կապակցութեամբ հարցումի մը պատասխանելով, Արտաքին Գործոց նախարարը ըսաւ նաեւ, որ Թուրքիա այս խնդրին մէջ իր քայլերն ու միջոցները առած է, հիմա իրաւամբ կը սպասուի, որ Ամերիկա կատարէ այն պարտականութիւնը որ իրեն կը վիճակի:

Պիրանտ յիշեցուց, որ ոմանք կը խորհին թէ՝ Խորհրդային Միութիւնը կքելու վրայ է վերջին զարգացումներու հետեւանքով: «Ի՞նչ է ձեր կարծիքը, Խորհրդային Միութիւնը կը կքի՞»: Այս հարցումին ալ Եըլմազ տուաւ հետեւեալ շահեկան պատասխանը: «Ուրկէ կը հանէք այսպիսի հարցումներ: Կարելի՞ է երեւակայել որ Խորհրդային Միութիւնը փուլ կուգայ: Գեր պետութեան մը մասին է խօսքը: Աշխարհի ամենէն հզօր պետութիւններէն մէկը»:

«Սուրիացիները Կը Զինեն Հալէպի Հայերը»...

Սուրիոյ Պետութեան Նախագահ Հաֆըզ Էսատ կ'ուզէ իր զաւակը Պասիլ Էսատը հասցնել որպէս իր յաջորդը եւ որպէսզի Հայեր նեցուկ կանգնին իր զաւկին, ան սկսած է զինել Հալէպի մէջ բնակող հայերը:

Հաֆըզ Էսատ կը տառապի արեան քաղցկեղէ եւ ան անպայման կ'ուզէ իր զաւակը տեսնել որպէս իր յաջորդը: Եւ տրուած ըլլալով որ Հայերը բաւարար չափով ազդու են Սուրիոյ տնտեսական կեանքին մէջ, ան կ'ուզէ զինել Հայերը եւ շահիլ անոնց համակրանքը: Կը պնդուի թէ Հաֆըզ Էսատ ատրճանակ, հրացան եւ ՀՍՍ-7 հրթիռարձակ բաշխած է հայերու: Հայերը այդ շրջաններուն մէջ կազմակերպուելու աշխատութիւններ առաջ կը տանին:

Հաֆըզ Էսատին զաւակը Պասիլ Էսատ յաճախակի կերպով Դամասկոսէն Հալէպ կ'երթայ քննելու համար Հայոց կազմակերպչական աշխատութիւնները: Հաֆըզ Էսատի քայքայուած առողջութիւնը սա վերջերս վարչակարգի տագնապ մըն ալ ստեղծած է Սուրիոյ մէջ եւ պառակտումներ յառաջ եկած են բանակին եւ պետական շարքերու մէջ:

Քաղաքական նորանոր տագնապներով յղի կացութիւն մը կը տիրէ Սուրիոյ մէջ, ուր հայերը նեցուկ կը կանգնին Պասիլ Էսատի: Քաղաքական դէտեր սակայն դիտել կու տան որ, որքան որ ալ հայերուն զինուիլը Սուրիոյ ներքին մէկ հարցը կը թուի առաջին ակնարկով, այս զինարշաւը Թուրքիոյ համար ալ իրական վտանգի մը նշանակութիւնը ունի: Քաղաքական դէտերը իրենց այս մտահոգութիւնները կը հիմնաւորեն թրքական հողերու վրայ հայերու ունեցած ախորժակին եւ հայերու կողմէ ՓՔՔ-ի տիարբեկիրչներուն ցուցաբերուած օժանդակութիւններուն վրայ:

Ընկերային Երեւոյթ Կը Ներկայացուի Ամարաս

Հայկական Նորաստեղծ Բարեգործական Ընկերութիւն, Որ Կը Գործէ Յօգուտ Արցախի Բարգաւաճման

Մեր հայրենիքի վերջին դէպքերից հետո հիմքից ցնցուեց այն ամուր պատնեշը, որին հենվել էր Սփիւռքահայութիւնը: Դէպքերը վերացան, նկատները խառնուեցին, հայրենիքը սկսեց ծածանել եռագոյն՝ կարմիր, կապոյտ նարնջագոյն դրօշը: Գոյները փոխվեցին, բայց ապագան դեռ անորոշ է մի ժողովուրդի, որի համար մեր օրերում ապրելն անգամ հանցանք է, ուր մնաց երազելն ու ցանկալը. կա միայն գոյութիւնը պահպանելու պայքար, մի փոքրիկ անելութեան մէջ: Հայութեան յոյսի կղզին՝ Սովետական Հայաստանը վիրավորվել է, դարձել իրական զարկուած հայրենիք, զրկուած հայրենիք: Ժողովուրդի միտքը սեվերում է միայն իրենց հուզող հարցերին՝ Արցախ, գաղթականներ, երկրաշարժի վայրերի կառուցում, վրան առաւել աղ ու պղպեղ՝ շրջափակում: Այս կիսախեղծ վիճակում, նա օգնութիւն է հայցում աշխարհից:

Դեկտեմբերի 10-ին, 1989, Հայաստանի երկրաշարժի տարելիցի օրերին, Տեր եւ Տիկին Ճեպեճեանների բնակարանում տեղի ունեցաւ ընկերային հաւաք: Երկրաշարժի մասին վիտեոժապավենի ցուցադրութիւնը ներկաներին յիշեցրեց այն հուզումնալից օրերը որ ունեցել էին ճիշտ մէկ տարի առաջ: Ցուցադրութեան հետեւեցաւ Ազնավուրի վիտեոֆիլմը՝ **Քեզ Համար Հայաստան**, կատարուած Ֆրանսայի 40 հանրաճանաչ երգիչներու կողմէ հեղինակի ընկերակցութեամբ: Եւ ապա Տիկ. Լուիզ ներկաներին կարդաց **Բարի երթ Ամարասին** հոդուածը Հայրենիքի Ձայնի մէջ վերջերս լոյս տեսած, որ կը ծանօթացներ այս տարվա մարտին Ստեփանակերտում հիմնուած **«Ամարաս»** նորաստեղծ հայկական բարեգործական ընկերութեան հետ:

Այսօր Արցախը չափազանց ծանր կացութեան մէջ է. եթէ չդիմվի վճռական քայլերի, նշանակում է արդի ճգնաժամային վիճակը վաղը կարող է դառնալ աղետալի: **«Ամարաս»**ը հասարակական կազմակերպութիւն է: Նա հանդես է գալիս հանուն խաղաղութեան, դէմ է ամէն տեսակի ազգային անարդարութեան եւ ստորնացման: **«Ամարաս»**ը գործակցում է պետական եւ հասարակական պաշտոնական եւ ոչ պաշտոնական կազմակերպութիւնների հետ, ինչպէս նաեւ եկեղեցու հետ: Ընկերութեան գլխաւոր խնդիրներից մեկն է օգնութիւն ցույց տալ կարիքաւորներին, բարձրացնել ընտանիքի դերը հասարակութեան մէջ: **«Ամարաս»**ը օժանդակում է հայ մշակոյթի, լեզվի, արվեստի զարգացմանը, ազգային ավանդույթների, ծեսերի արհեստների վերածնման, պատմութեան եւ մշակոյթի հուշարձանների պահպանման ու վերականգնմանը: Եվ պատահական չէ որ Ընկերութիւնըն իրեն մկրտել է Ե-դարից մնացած, քանի քանի անգամներ ավերված ու նորոգված Ամարաս վանքի անունով:

Եթէ երկրաշարժից տուժած հայրենիքին անհրաժեշտ էր հրատապ օգնութիւն, այժմ նոյն վիճակում է Արցախը: Արցախցիները առանձին մնացած իրենց տառապանքներով, արտաքին աշխարհից կտրված այս հողակտորում ունեն մարդ էակի գոյութիւնն ապահովող ամէն ինչի՝ ըլլայ այդ համակրանք, բարոյական նեցուկ եւ շփումներ ու բնական է առաջին հերթին նիւթական օգնութիւն:

Նման կապեր առ այժմ կարելի է անել Երեւանի միջոցով: Շարժումը արդեն ծավալվում է Հայաստանում՝ **ներքին սփիւռքում** ցանկալի է որ այն տարածվեր նաեւ **արտաքին սփիւռքի** մէջ: Արցախին օգնող հայը իր ազգային պարտականութիւնները կատարած կարող է համարել:

Ներկաները ոգեվորելու նպատակով, բժ. Ճեպեճեան անոնց ավետեց նաեւ Երեւանի մէջ մի քանի օր առաջ ստորագրված համաձայնութիւնը **Եվրոպոլիս** քաղաքի հիմնարկումի մասին. հոլանտացիների թեյադրանքով, եվրոպական երկիրներ ծրագրած են բիբլիական Արարատի բեշերին Այրարատեան դաշտի վրայ ի Հայաստան, կառուցանել գերարդիական քաղաք 200.000 բնակչի համար, որ պիտի ծառայէ որպես կեդրոն, Եւրոպայի եւ մարդկութեան ընկերային ամենահրատապ հարցերը քննարկելու եւ լուծելու: Եվրոպոլիսի մէջ տեղի ունենա՛լու են միջազգային պրոպլեմներու, խաղաղութեան, մարդկային իրավունքներու ցեղասպանութեան զինաթափումի ինչպէս նաեւ շարք մը հարանման հրատապ խնդիրները վիճելու համար կազմակերպուելիք հանդիպումները: Ահա թէ միջազգային ինչ վարկ կը սպասէ, երկրաշարժէն մի քանի քաղաք կորսնցուցած Հայ ժողովուրդին...:

Երեկոյի ավարտին, եղան միտքերու փոխանակութիւններ. ելոյթ ունեցան հայրենի հիւրեր՝ Պրոֆ. Միքայել Ղազարեան՝ Երեւանի Համալսարանի Աստրոֆիզիկայի դասախոս որ քաղաքս կը գտնուի որպէս հիւրը Հալէպի Համալսարանի. Պրոֆեսոր Ղազարեան տեղակալն է Վիկտոր Համբարձումեանի, Համալսարանի գծով: Տիկ. Հասմիկ Մկրտիչեան, Երեւանի Արեւելագիտութեան Ինստիտուտէն, Գիտութիւններու թեկնածու, որ Հալէպ ժամանած է քաղաքիս Համալսարանի Արաբական Գիտութիւններու Պատմութեան Ինստիտուտի (Թուրաս) մէջ հետազոտումներ կատարելու: Ան առաջին գիտաշխատողն է Հալէպ ժամանած՝ արդէն "Քոյրեր" դարձած Հայ եւ Արաբ զոյգ Համալսարաններու:

Գիշերուայ ուշ ժամուն, հիւրեր բաժնուեցան բարձր տրամադրութիւններով, հաստատ համոզուած որ իւրաքանչիւր սփիւռքահայու առաջնահերթ պարտականութիւնն է Արցախին զօրակցիլ, մտնելով **Ամարասի Բարեկամներու** շարքին մէջ:

Կարինէ Տեր Գեվորգեան
22 Դեկտ. 1989, Հալէպ

ՊԱՔՈՒԻ ՋԱՐԴԸ

Նոր Միջոցներ Ու Ձեւեր

Պաքուի հայոց ջարդը եթէ իր արդիւնքով հաւասարեցաւ կամ գերազանցեց Սումկայիթը (զոհերուն վերջնական թիւը դեռ յայտնի չէ), սակայն ջարդին կազմակերպման եւ գործադրման մէջ երկու նոր ձեւեր աւելցած են արդէն ծանօթ միջոցներուն:

Առաջինը, ազերի աղջիկներուն մասնակցութիւնն է, որպէս որոգայթ ու ապա՝ թալանի, կողոպուտի եւ վայրագութիւններու մասնակցութիւն: Գիտենք թէ, Սումկայիթի եղեռնագործներուն պարագլուխը հրապարակէն պոռացած էր, որ ազերի կիները հեռանան պատշգամներէն եւ պատուհաններէն, որպեսզի անոնց մահմետականի կանացի ամօթխածութիւնը չվիրաւորուի գործադրուած վայրագութիւններէն, որոնց կարգին՝ բռնաբարումներ եւ հայ վիրաւորներու երկիզումներ:

Այժմ կ'երեւի ոչ միայն ազերի կիները կորսնցուցած են իրենց «ամօթխածութիւնը», այլ վկայութիւններու համաձայն անոնք բախած են հայոց տուներուն դուռները, մինչ քովնտի պահըւըտած են ոճրագործները: Հայերը, նախ ստուգելէ ետք որ կին մըն է եկողը լայն բացած են դռները, որոնցմէ ներս խուժած են ջարդարարները: Ականջը խօսի ռուս բանաստեղծ Եւտուշենքոյի, որ բանաստեղծութիւն մը նուիրած էր ազերի կնոջ, որ հայու կեանք փրկած է:

Երկրորդ գործադրուած միջոցներն են. բացի Սումկայիթի ծանօթ գործիքներէն, գործածուած են արեւմտեան ատրճանակներ եւ ինքնագործ զէնքեր յարձակելու համար հայկական տուներէն ներս կամ սպաննելու համար բռնուած հայերը:

viene de pag.1

LA DESIGUAL Y SIEMPRE...

mujeres armenias, atacaron con violencia aldeas armenias indefensas, y pasaron al pueblo a sangre y fuego, así como exiliaron a cientos de miles de armenios, hasta llegar al bloqueo de Armenia y Artsaj.

Y todo eso ocurrió ante la vista impotente e indiferente del ejército soviético.

Dando un paso más adelante y explotando el desorden general, con "sabiduría" turca desencadenaron una ofensiva más audaz con el propósito de levantar las fronteras comunes con Irán y Turquía.

Ese fue sólo un primer paso para unir a los azerbaijanos del sur y del norte,, a ambos lados del río Arax y, por otro lado, para realizar con3n Turquía, en un plazo más o menos largo, el proyecto panturanico, tomando como puento de partida a Najichevan, Arsaj, Zanguezur y, gradualmente, a otras provincias armenias.

¿Ese era el propósito de los azeríes, o esos hechos eran sólo tristes tentativas para mantener Artsaj en el seno de Azerbaijan?. En nuestra opinión, todo lo que hace Azerbaijan emana de la esencia misma de ese proyecto panturco de larga duración.

Desde 1920, por primera vez la Patria herida y enlutada por el terremoto, durante 2 años enfrenta sin cesar los momentos más fatales de su historia.

Examinando todos los aspectos de la guerra desatada contra Armenia por Azerbaijan, desde el 13 de enero, y comparándola con la barbarie y usurpaciones cometidas por los turcos con los armenios en la víspera del Gran Genocidio de 1915 así como la política adoptada por Occidente hacia los armenios de aquella época con la de hoy, encontraremos mucha similitud entre los datos de ambos casos.

Datos que, como siempre, hoy tampoco son a favor de los armenios con respecto a nuestra perennidad física, nuestra seguridad y la inviolabilidad de nuestro territorio.

El turco sigue trabajando constantemente y por todos los medios para borrar de la superficie del mundo a nuestra pequeña tierra, gloria de la armenidad, que hoy se llama Armenia Soviética, para enterrar una vez por todas la cuestión armenia y con ella todos los vestigios de la cultura armenia.

La guerra sucia e inmoral declarada contra Artsaj, no es un acto limitado y separado. Ella es el eslabón principal de un complot contra los armenios, premeditado y preparado desde largo tiempo. Los superpotentes que hasta hoy no dejan de prodigarnos su simpatía, ya han adoptado sus respectivas posiciones en función de sus intereses político—económicos, los cuales son más a favor del enemigo (y aún pueden serlo mucho más) que de nosotros.

Además, los 5000 soldados del ejército y los 1000 hombres de la fuerza de seguridad interior de la Unión Soviética, estacionados en Bakú, pueden retirarse a mediados de febrero, según manifestaciones del comandante militar V. Dubvak, dejando a los armenios solos contra los azeríes.

¿Estamos en vísperas de la reiteración del Gran Genocidio?. Esperamos que no.

La Unión Soviética con su posición antinatural adoptada hasta hoy, voluntaria o involuntariamente alentó la propaganda turca, y por la última declaración de Gorbachov demuestra que no cambió nada en su posición.

La mayoría de los países de Occidente, y sobre todo los Estados Unidos —donde la fuerte oposición que confronta la fórmula presentada con motivo del 75º aniversario del Genocidio demuestra la intensa actividad del enemigo— manifiestan la misma ambigua política del Kremlin hacia nosotros. Jamás debemos olvidarnos de estos hechos, así como tampoco de los aspectos negativos que aún puedan aparecer a la luz de la presente situación mundial.

Hoy, nuestro espíritu de lucha es más poderoso que nunca. Nuestra voluntad de reclamar nuestros derechos no se aflojará y no cederá ni a los azeríes ni tampoco a las presiones de su sostén, Turquía y otros países.

La racionalidad y la circunspección política son los imperativos más esenciales que no debemos ignorar durante el curso de nuestra noble y sangrienta y, tal vez, muy larga lucha, en salvaguardia de la misma existencia de nuestro pueblo.

La unión en torno a la Madre Patria, así como brindar a ésta toda la ayuda necesaria y con todas nuestras posibilidades, sin reservas ni hesitación alguna, constituyen importante garantía para fortalecer a la Patria en su nivel económico y tecnológico. Además, y sobre todo, para demostrar que ella no está sola en sus dolores y dificultades.

Por supuesto, si (Dios no lo quiera) a pesar de nuestros buenos esfuerzos y esperanzas, así como de nuestra lucha legal, pacífica y constitucional— no obligadamente hostil— para devolver Artsaj al seno de su madre Armenia, nos fuerc impuesta una guerra fatal de ser o no ser, la que no sería beneficiosa para nadie, ningún armenio, en cualquier lugar en que se encuentre, bajo ningún pretexto podrá escapar a su sagrado deber de participar.

Esperamos y deseamos que las cosas no lleguen a este punto y no ocurra lo indeseable. Esperamos y deseamos que no se olvide, también que la destrucción de la Unión Soviética sería, sobre todo y ante todo, un golpe mortal a nuestra Madre Patria.

También sería un golpe igualmente poderoso la desaparición de la Armenia soviética, en un flanco estratégicamente importante de la Unión Soviética. Así están de fusionados los intereses de ambas.

Norair Karadanian





Isabel Tchalian

LOMO FESTIVO

Limpiar y atar un lomo de 1½ kilo. Sazonarlo con sal y pimienta, untarlo con manteca y mostaza; acomodarlo en una asadera, agregándole una cebolla y una zanahoria. Cocinarlo a horno caliente.

A la media hora de cocción, el lomo tomará un color dorado, oportunidad en que se rociará con una copa de vino blanco y un cucharón de caldo. Se seguirá rociando periódicamente con su propio jugo.

Retirar el lomo del horno cuando esté cocido y volcar en un recipiente el jugo depositado en la asadera. Agregar a este jugo una cucharadita de maicena deshecha en agua fría, para espesar la salsa.

Cortar el lomo en tajadas y acomodarlo en una fuente, decorándolo con las papas y los champignons. Bañarlo con la salsa.

Pueden agregarse en la fuente damascos secos, cocidos en un poco de agua y azúcar. No cocinarlos más de 5 minutos.

(Complemento: Preparar papas a la cucharita y darles un hervor luego saltarlas en manteca. También saltar en manteca ¼ kg. de champignons).

KALPAKIAN EN CADARA

La Cámara Argentina de Distribuidores de Alfombras, Revestimientos y Afines (CADARA), acaba de renovar su Comisión Directiva, habiendo elegido como su Vicepresidente al señor Arfin Kalpakian, empresario reconocido mundialmente en el ramo de alfombramientos.

Feliz Llegada

Las familias Der Avedissian y Muradian están de parabienes. La casa de sus hijos Silvana y Adrián acaba de verse alegrada con la llegada de Federico, primogénito y robusto bebé que, además de a sus "papis", llenó de contento a los abuelos Rubén y Beatriz Der Avedissian y Sylva y Murad Muradian.

ANUNCIE AQUI

Por su información, sus artículos, sus editoriales, Sardarabad es el medio más leído por la colectividad armenia.
Si tiene algo bueno que ofrecer, anúncielo aquí.....
¡ y disfrute sus resultados !

Infórmese en el 771—2520 — Departamento de Producción.

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL TEKEYAN

Redacción y Administración
Gorriti 4804
1414 CAPITAL FEDERAL
T.E.: 771—2520
Horario de atención
Lun a Vier de 10.00 a 19.00

Registro Nac. de la Propiedad Intelectual
Nº 78.836
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía recepción de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap 84
Cep. 00579—San Pablo
T.E: 813—6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E: 70—3114 Montevideo